Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11,562

J 9251
87

3

2032

3504

11,562.

24

01 SEP 201
31 AUG 2007

ՂԵՎ. ՔԵՀ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

2032

9(47.925)
Հ-87
46.
1004
17255

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՈՒՏԻԱՑԻ ԵՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ՉՐԱԳԻՐԱՆ

ԹԻՖԼԻՍ 1904
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ ընկ. Մադաթ. փող., 15.
(59)

14 JUN 2013

Дозволено цензурою. Тифлисъ, 28 Сентября 1904 г.

ՄԵԾԱՊԱՏԻՒ

Պ. ԱԼԵՔՍԻԵՆՈՍ ՅՈՎՀ. ՔԱՐԱՔԱՇԻՆ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՆՈՒԷՐ՝

Հեղինակից.

Посвящается

Многоуважаемому

Алексѣю Ивановичу

КАРАКАШЪ

ОТЪ АВТОРА.

Ա.

Հարիւրհուն տարի է, որ մենք Հայերս էլ ունինք մեր պարբերական մամուլը, որի ներկայացուցիչները աշխատել և գործել են այնչափ, որչափ որ շրջապատող հանգամանքներն ու պարագաները ներել են։ Նրանք զարթեցրել են զանազան խնդիրներ, որոնցից ոմանք՝ այսպէս կամ այնպէս ստացել են իրենց լուծումը, իսկ ոմանք էլ տրուել են մոռացութեան։ Մոռացութեան և անուշադրութեան մատնուած խնդիրներից միոնն էլ այն է, որ մենք Հայերս երբէք ծանօթութիւն չունինք մեր երկրի ազգաբնակութեանց տեղադրութեան և զանազան ժողովուրդների վարք ու բարքի, նիստ ու կացի, ազգային ինքնուրոյն առանձնայատկութիւնների և սովորութիւնների հետ։ Մեր երկրի զանազան ազգերի առանձնայատկութիւնների, նրանց լեզուի, կրօնի և ազգային սովորութիւնների մասին մենք միշտ օտար աղբիւրներից ենք տեղեկութիւններ քաղում, որոնք շատ անգամ սխալ և անստոյգ են լինում։ Այն ինչ մեր երկրի բանիմաց, հասկացող և ին-

տելլիգենտ դասը, իբրև տեղացի և տեղական հանգամանքներին ծանօթ, մեծ ծառայութիւններ կարող էր անել։ Կրթուած դասը, համարձակ կարող էր լուսաւորութեան ու քաղաքակրթութեան կարապետ հանդիսանալ, եթէ իւրաքանչիւր գաւառի Հայ ժողովրդի նիստն ու կացը, օդն ու ջուրը, հնութեան կնիք կրող սրբավայրերի, բերդերի ու ամրոցների այժմեան իսկական վիճակը լուսաբանէր և հրապարակ հանէր։ Բայց, տարաբախտաբար, մինչև այժմ մեր հասկացող և բանիմաց դասը (աննշան բացառութեանց մասին չէ մեր խօսքը) ոչ մի քայլ չէ արել այս մասին։ Այս իսկ պատճառով մեր մամուլը զրկուել է իւր հետաքրքրական նիւթերից, իսկ Հայ ժողովուրդը չարաչար տուժել է՝ մնալով խաւարամած տգիտութեան և յետադէմ անշարժութեան մահաբեր քնի մէջ։ Ահաւասիկ ձեզ հզօր փաստեր։ Հայ ընթերցողը աւելի ճիշտ և շատ տեղեկութիւններ ունի մեզանից հազարաւոր ժողոնների հեռու գտնուող ազգերի, որպիսիք են ծայրագոյն արևելքում— Քորեացիների, Ճապոնացիների, Մանջուրիացիների, Չինացիների, նոյն իսկ հարաւային Աֆրիկայում՝ մինչև անգամ վայրենի Զուլուսների ու անօրինակ հայրենասէր և քաջամարտիկ Բոէրների մասին, քան թէ՝ մի բուռն Ուտիացիների, որոնք դարերից ի վեր ապրում են մեր քթի տակ (Նուխու գաւառում)։ Թէպէտև մեր հին պատմաբան մատենագրներից միայն Մով. Կաղանկատուացին իւր պատմութեան էջերում շատ բաներ է ասել Ուտիացիների մասին, թէև մեր նորագոյններից

գեր. Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեան *) և Մակար եպիսկ. Բարխուդարեանց **) անձամբ շրջել են Ուտիացոց աշխարհում, բայց սրանք շատացել են գրել միայն տեղագրական չոր ու ցամաք տեղեկութիւններ։ Իսկ Ուտիացոց ժողովուրդների վարք ու բարքի, ընտանեկան նիստ ու կացի, ազգային հնաւանդ սովորութիւնների ու առանձնայատկութիւնների, նրանց հոգեկան ու բարոյական արժանիքների և թերութիւնների մասին չէք գտնի և ոչ մի խօսք։ Հարկաւ, այս ամենի մասին ժողովրդի ներքին խաւերում չէր կարող թափանցել ոչ մի ճանապարհորդ, որի բուն նպատակն է շրջել գիւղ գիւղ, քաղաք քաղաք և իւր տեսածներն ու լսածները ճշտութեամբ գրի առնել։ Մի անծանօթ և մոռացուած ժողովրդի հոգեկան և բարոյական պատկերը իւր հարազատութեամբ միայն նա կարող է սաղդ արձանագրել, ով որ այդ երկրումն է ծնուել ու սնուել և կամ այդ երկրումն է ապրել ու շնչել երկար տարիներից ի վեր։ Իդէպ է ասել, որ, բարեբախտաբար, գեր. Տ. Արիստակէս արքեպիսկ. Սեդրակեան սրբազանը այդ կողմից, իւր կարգակից սրբազան եղբարց մէջ, մի առանձին բացառութիւն է կազմում։ Վասն զի՝ 1867 թ. Ղարաբաղի Թեմ. Առաջնորդ Ջալալեան Սրբազան իւր փոխանորդ 22-ամեայ երիտասարդ բարձր. Տ. Արիստակէս վար-

*) «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», հատոր բ. տես, 379—380 երես։

**) «Աղուանից երկիր և դրացիք», տես, երես 244—245։

դապետ (այժմ արքեպիսկոպոս) Սեդրակեանցին ուղարկում է Նուխի՝ «թէ տեղական փոխանորդի վրայ եղած գանգատներին վերահասու լինելու և թէ գաւառի եկեղեցիներին և ժողովրդին այցելութիւն անելու և զանազան գործեր կատարելու» (համար *)։ Անկեղծաբար պիտի խոստովանել, որ հայրենասէր երիտասարդ վարդապետը տեսնելով այդ դժբախտ երկրի վերին աստիճանի յետ մնացած և ողբալի վիճակը, հեռատեսութեամբ և լրջմտութեամբ մի լաւ քայլ է անում, այն է՝ Ուտիախոս Նիժ աւանից չորս, իսկ Զոռլու և Մերզաբէկլու իրար կից թրքախոս Հայադաւան գիւղերից ընտրում և ուղարկում է ս. Էջմիածնի ժառանգաւորաց հոգ. դպրոց մի-մի սրամիտ, ձայնեղ և քաջառողջ Հայ պատանիներ, որ գնան և սովորեն մայրենի հայերէն լեզուն և ապա վերադառնալով իրենց հայրենիք՝ քահ. լինին **)։ Գեր. Տ. Արիստ. արքեպ. Սեդրակ. սրբազանի երկասիրած «Քահ. խնդիր» գրքի 6 և 7-րդ երեսներում ուղարկուած պատանիների մասին, ցաւելով պիտի ասել, սպրդել են հետևեալ անճիշտ տողերը.—«Չորս երեխաներն ընտրուեցին և ուղարկուեցին, բայց Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցից դուրս գալուց յետոյ նրանք փոխանակ իրենց հայրենական գիւղում քահ. լինելու, մէկը քահանայացաւ Թիֆլիզում և միւսներն էլ ընտրեցին ուրիշ տեղեր և պարապմունքներ»։

*) «Քահանայական խնդիր», տես, երես 2—3։
**) «Քահ. խնդիր», տես, երես 6—7։

Ստոյգ իրողութիւնն այս է. նախ՝ որ ընտրուեցին և ուղարկուեցին Մ. Աթոռի ժառանգ. դպրոց ոչ թէ չորս, այլ՝ վեց երեխաներ. չորսը՝ Նիժից, իսկ երկուսն էլ Զոռլու թրքախոս Հայադաւան գիւղից։ Ահա նրանց անուանացուցակը և ընտրած պաշտօնավարութեան տեղերն ու պարապմունքները։ Նիժ աւանից՝ 1. Խաչատուր Ճոտանեանց, 2. Յովհաննէս Տ. Թովմասեան, 3. Վարդան Մարտիրոսեանց և 4. Յովսէփ Դաւթեանց, որոնք ս. Էջմիածնի օդն ու ջուրը չտանելու պատրուակով՝ կարճ ժամանակից յետոյ կիսատպռատ վերադարձան իրենց հայրենի գիւղը և սկսեցին պարապել երկրագործութեամբ—վարուցանքով մինչև ցարդ։ Զոռլուից՝ ուղարկուել էին Մելքիսեդէկ Խաչատրեան և Ղազարոս Յովսէփեան։ Նուաստիս յորդորմամբ և համոզմամբ յիշեալ ընկերս հազիւ մնաց ինձ հետ միասին մինչև մեր ուսման աւարտելը։ 1874 թ. Զոռլու և Մերզաբէկլու թրքախոս գիւղացիք համախոսական թղթով կամեցան քահ. ձեռնադրել տալ ինձ իրենց վրայ. բայց իմ ընկերոջ՝ Մելք. Խաչատր. ազգականներն ու խնամիները երկու գիւղերումն էլ յաղթանակը տարան, նրա քահ. դառնալու գործը յաջողեցրին, իսկ ես, որպէս հօրից զըրկուած որբ պատանի, մնացի առանց տեղի և պաշտօնի։ Նուխի քաղաքի արհեստաւոր և միջակ դասը կամեցաւ քահ. ձեռնադրել տալ ինձ իրենց վրայ, բայց այստեղ էլ մի քանի ազդեցիկ ընկերը ն ու աղաները ինձ՝ իբրև գիւղականի զաւակի, արժան և յարմար չհամարեցին ինձպէս մի թերուսին

քահ. տեսնել Նուխու պէս մի յետ ընկած գաւառական քաղաքում։ 1874 թ. և 1875 թ. սկզբնէրին Գէորգ Դ. մեծագործ Հայրապետը բազմիցս անգամ պահանջեց ինձ Նուխու Հոգ. կառավարութիւնից, որ «փութով գնամ ս. Էջմիածին մի շատ կարևոր գործի համար»։ 75 թ. Մարտ ամսին հասայ ս. Էջմիածին. հեռատես Հայրապետը շատ անգամ յորդորեց ու համոզեց ինձ, որ կուսակրօն լինիմ և դառնամ վարդապետ, բայց ես ինձ անարժան և անպատրաստ համարելով, բացէ ի բաց հրաժարուեցի այդ սրբազան կոչումից։ 1875 թ. վերջերին, յաւէրժայիշատակ Հայրապետը առանձին ս. կոնդակով կարգեց ինձ ուսուցիչ հայկական ձայնագրութեան և երգեցողութեան Թիֆլիզի բոլոր ծխական երկսեռ և օր. միջնակարգ դպրոցներում։ 1880 թ. միևնոյն մեծագործ Գէորգ Դ. Հայրապետի հայրական յորդորմամբ և հաւանութեամբ քահ. ձեռնադրուեցի Թիֆլիզի ս. Մինաս եկեղեցու վրայ։ Բայց երբէք չեմ մոռացել իմ դժբախտ հայրենիքս, այլ նրա լուսաւորութեան և յառաջադիմութեան համար ոչ մի ջանք չեմ խնայել և խնայում մինչև ցարդ։ Թող ներողամիտ լինի ընթերցողս, որ ակամայ շեղուեցի՝ Գեր. Տ. Արիս. Սրբազանի ինձ վերաբերեալ յիշեալ անստոյգ տողերի պատճառով։ Ուտիացիների մասին երբեմն-երբեմն երևացել են Հայ մամուլի էջերում թուղթիկ թղթակցութիւններ, նամակներ և ճանապարհորդական ուսումնասիրական դիտողութիւններ, որոնց մէջ շատ նշանաւոր տեղ է բռնում յայտնի քիմիկոս պրոֆ.

Անդրէաս Արծրունին։ Այս պատկառելի գիտնականը, որքան ես յիշում եմ, 1875 կամ 1876 թ. Սղնախի, Թելաւի և Զաքաթալի վրայով ճանապարհորդելով, հասաւ Նուխի և այնտեղից Ուտիախօս Վարդաշէն աւանը և ապա սկսեց իւր ճանապարհորդական տպաւորութիւնների մասին գրել 76 թ. «Մշակի» զանազան համարներում։ Բայց շատ ափսոս, որ ձեռքիս տակը չունիմ յիշեալ թերթի այն համարները, որոնցից կարողանայի օգուտ քաղել։ Այսու ամենայնիւ, որպէս ուտիական անբախտ երկրի նժդեհ զաւակ, ինձ աւելի քաջ յայտնի են այդ ժողովրդի նիստն ու կացը, նրա բարքերն ու սովորութիւնները, քան թէ ուրիշ որ և է մէկին։

Հայոց պատմութիւնից և աշխարհագրութիւնից մեզ յայտնի է, որ Ուտի կամ Ուտիացոց աշխարհը համարւում էր Մեծն Հայաստանի 15 նահանգներից մէկը, որի սահմաններն են՝ հիւսիսից Դաղստանը և Կովկասեան լեռնաշղթան՝ մշտապէս սպիտակ ձիւնով պատած իւր Շահ-դաղ կոչուած գագաթով. արևելքից՝ Կասպեան ծովը, հարաւից Փայտակարանը և Սիւնեաց լեռները, իսկ արևմուտքից Գուգարաց աշխարհը։

Այդ ընդարձակ, բերրի, պտղաբեր, ջրառատ և հարուստ բուսականութեամբ լի ակնապարար հովտում ապրում էին հին ժամանակ մի քանի հարիւր հազարից բաղկացած Ուտիացիք, որոնք հոգով, սրտով, կրօնով և ջերմ զգացմունքներով սերտ կերպով կապուած՝ ապրում են իրենց ազգակից և հաւատակից Հայի հետ միասին,

շատ երկար դարերից ի վեր։ Բայց իրենց ընտանիքներում խօսում էին ուտիերէն լեզուով, որ մինչև յարդ պահպանել են անկորուստ։ Այս մի բուռն քաջ և անվեհեր ժողովուրդը մեր անցեալ պատմութեան մէջ մեծ դեր է խաղացել։ Իւր Հայ եղբօր հետ ձեռք ձեռքի տուած, մերթ ընդ մերթ նա սոսկալի կռիւներ է մղել իրենից աւելի թուով գերազանց անթիւ լեռնականների և արիւնարբու մահմեդական խանների հրոսակային խմբերի դէմ։ Քաջասիրտ Ուտիացիք շատ անգամ ջարդ ու փշուր էին անում իրենց դարաւոր թշնամիներին, իսկ շատ անգամ էլ մահաբեր հարուածներ էին ստանում նրանցից։

Երկար դարերի ընթացքում, քաջամարտիկ Ուտիացիք կատաղի կռիւներ մղելով բարբարոս լեռնականների և արիւնարբու մահմեդականների դէմ, անհաւասար պատերազմների մէջ՝ նրանց մի մասը բոլորովին ջարդ ու փշուր եղաւ, մեծ մասը գերի տարուեց Աւղանիստանի, Բելուջիստանի և Պարսկաստանի խորքերը, մի մասն էլ մահմեդական կրօնն ընդունեց՝ միայն սոսկալի չարչարանքներից և անտանելի տառապանքներից ստիպուած։ Մահմեդական կրօնն ընդունողներին՝ տիրող խաները տուին թէ առատ ու ընտիր վարելահողեր և թէ բէկութիւն ու պէսպէս արտօնութիւններ և մնացած քրիստոնեայ Հայերին ճնշելու և նեղելու անծայր ու անսահման ամեն տեսակ իրաւունքներ։ Իսկ մի փոքր մասը միայն ամենածանր զոհեր և ահագին զրկանքներ կրելուց յետոյ, հաւատարիմ ու հաստատ մնաց իւր սուրբ կրօնի մէջ։

Այժմս զուտ Ուտիախօս Հայադաւան ժողովուրդներն են Վարդաշէն և Նիժ բազմամարդ գիւղաքաղաքները, որոնցից առաջինը 40—45 վերստ հեռաւորութեամբ գտնուում է Նուխու արևելեան կողմը և բաղկացած է 680 տուն ծխից, որից 300 տուն Հայադաւան, 200 տուն՝ հրէայ, 150 տուն յունադաւան *) և 30 տուն պարսիկ, որ պատկանում են Սուննի աղանդին։ Իսկ Նիժ գիւղաքաղաքը գտնուում է Նուխու հարաւ-արևելեան կողմը, 60—65 վերստ հեռաւորութեամբ, որի բնակիչների թիւը հասնում է 900 ընտանիքի, որոնցից 100 տուն թուրքեր և լեզգիներ են, իսկ մնացած 800 տունը՝ զուտ Հայադաւան Ուտիացիներ։ Թրքախօս Հայադաւան գիւղերն են Զոռլու,

---

*) Տես «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», երես 397, որի մէջ Զալալեան սրբազանը գրում է կրօնափոխ դարձած ուտիացիների մասին այսպէս։ ...«յորոց հարիւրն (100 տուն) թողեալ զհայրենի կրօնս եղեն վրացիք ի վերջին ժամանակս ի հարստահարութենէ ումեմն ընչաքաղց եպիսկոպոսի, զորոյ անունն պատկառիմ ի գրել վասն մեծութեան աստիճանին, զոր յետոյ ընկալաւ։ Այդ ընչաքաղց և արծաթամոլ եպիսկոպոսը Յովհաննէս Կարբեցին էր, որ 1831 թ. ընտրուեց Կաթողիկոս ամենայն Հայոց։ Վստահելի և հաւատարիմ ծերունիներից ես լսել եմ, որ այդ անհեռատես եկեղեցականը՝ ս. Էջմիածնի պարտքերը հատուցանելու նպատակով, երբոր գիւղացոց վերջին անասունը բռնութեամբ վաճառել էտալիս, զայրացած ու զզուած այս բանից, 100 տուն հայադաւան Ուտիացիք մտնում են Վրաց եկեղեցու գիրկը։

Միրզաբէկլու, Սուլթան-Նուխի, Վարդանլու, Փաստառ և այլն և այլն, որոնցից առաջինները գըտնւում են 4—8 վերստ հեռաւորութեան վրայ՝ Նիժի արևելեան կողմը, իսկ վերջինները դէպի հիւսիսային կողմը՝ 30—35 վերստ հեռաւորութեամբ։

Բ

ՈՒՏԻԱՑՈՑ ԵՐԿՐԻ ՕԴՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Ուտիացոց աշխարհի օդն առողջարար և ջուրն անուշահամ, բիւրեղի պէս պարզ ու վճիտ է լեռնոտ ու անտառային մասերում, ուր անթիւ սառնորակ աղբիւրներ և վտակներ են հոսում։ Իսկ դաշտային տափարակ մասերում, առաւելապէս Նիժ գիւղաքաղաքի շրջակայ տափաստաններում, շատ ու ջնասակար է նրա օդն ու ջուրը, խայթող մոծակներով և միջատներով լի, տենդոտ և մալարիա վտանգաւոր հիւանդութեան բոյն։ Այս բանին նպաստում են մեծ մասամբ բրնձի անվերջ ու անծայր արտերը, դրանց մարգերում՝ կիզող արևի տակ ճնացած հոտած ու նեխած ջրերը, որոնք չորս կողմը մահաբեր թոյն են տարածում։

Բացի այս կորստաբեր հանգամանքից, կայ և մի ուրիշ արհեստական միջոց, որ կամաց-կամաց քայքայում ու կազմալուծում է ազգաբնակչութեանց ամբողջ կազմուածքը և ժամանակից

առաջ՝ մահուան գիրկն է նետում։ Դա այն մեծ և խոր փոսերն են, որ իւրաքանչիւր տուն, իւրենց տնային գործածութեան համար, գետից ջուր է հոսեցնում այդ փոսերի մէջ առուակով։ Այդ ջրամբարների երեսները թէև խնամքով ծածկում են հաստ գերաններով և ապա հողով, որպէս զի թէ մաքուր մնայ ջուրը և թէ մարդ ու անասուն չընկնի նրանց մէջը, այսու ամենայնիւ, ամառնային ամիսներին, երբ դէտերի ջրերը սկսում են ցամաքել և բնակչութիւնը դաշտային երկրագործական աշխատանքներով պարապել, ջրամբարների ջրերը սկսում են հոտել ու նեխել։ Հաստ գերաններով ծածկուած զանազան ծակ ու ծուկերում ոչ միայն գորտեր ու պէսպէս սողուններ են վխտում, այլ և շատ անգամ նոյն իսկ թունաւոր օձեր ու կրիաներ։ Ահա այդ է գլխաւոր պատճառներից մէկը, որ դաշտարնակ թէ ուտիախօս ու թրքախօս հայերի և թէ թուրքերի արտաքին սեռը լինում է սովորաբար վտիտ, վատոյժ և թուլակազմ։ Իսկ ընդհակառակն՝ իգական սեռը, կարմրաթուշ, առողջ, պնդակազմ և վարդագոյն, չարքաշ, համբերատար և տնային աշխատութեանց մէջ չափազանց աշխատասէր։

Գ

ՈՒՏԻԱՑՈՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Ուտիացի տղամարդկանց գլխաւոր պարապ-

մունքն է վարուցանք անել, որ կատարում է հը-
նադարեան Նոյ նահապետից ընդունուած ձևով և
կարգով։ Նա հերկում է, վարում է, ցանում է,
հնձում է ցորենի և հացաբոյսերի ամեն տեսակ-
ները այնպէս և այն եղանակով, ինչպէս որ նրա
նախնիքներն են արել հարիւրաւոր և հազարաւոր
տարիներ առաջ։ Տնային և դաշտային անհրա-
ժեշտ գործիքների ու ամենակարևոր առարկանե-
րի մէջ ոչ մի նորութիւն, ոչ մի փոփոխութիւն
ու յառաջադիմութիւն չէք տեսնի, այլ ամեն բան
նահապետական, իւր սկզբնական նախական վի-
ճակի մէջն է։

Մինչև ցարդ, նոյն իսկ թեթևաշարժ և յար-
ժարաւոր սայլերի գործածութիւնն անգամ դեռ
ևս չէ մտել Ուտիական աշխարհի ազգաբնակու-
թեանց մէջ, այլ կոշտ ու կոպիտ և բարձր անիւ-
ներով վիթխարի սայլեր են այն ձևով, որ ձևով
սրանց նախնիքն էին գործածում շատ դարերից
ի վեր։ Միակ նորութիւնը և փոփոխութիւնը նը-
բանումն է, որ այդ ահագին անիւների շուրջը
պատում են այժմս երկաթէ հաստ օղակով, որ
պինդ և դիմացկուն լինի։ Այսպիսի խոշոր ու
կոպիտ սայլերով իրենց նահապետական վար
ու ցանքի հացահատիկները, կամ խոտ, վառե-
լափայտ և ուրիշ ծանրութիւն կրելու համար
բացառապէս գործ են ածում հսկայ և ուժեղ գո-
մէշներ։ Այս իսկ պատճառով տնային չորքոտա-
նի կենդանիների մէջ ամենից պիտանին և ճան-
ճոտ ու քարքարոտ հեղեղատներից սայլերը դուրս
քաշելու յարմարը գոմէշն է, որի իւրաքանչիւրի

արժէքն է 80-ից սկսած մինչև 100—115 ռուբ.
որ աղքատ գիւղականի համար մի ահագին գու-
մար է։ Բայց ի սէր երկրագործութեան, ի սէր
վար ու ցանքի և դաշտային ծանր աշխատանքնե-
րի, Ուտիացի Հայը իւր բերանից կկտրի, իւր ըն-
տանիքի անդամներին հագուստից կզրկի, ահագին
տոկոսներով պարտքերի տակ կմտնի յատկապէս ու-
ժեղ, արագաշարժ և լաւ լուծ կրող գոմէշներ ձեռք
բերելու, որոնց համար համար իւր կեանքն ան-
գամ չի խնայում։

Ահագին տարածութեամբ Ուտիացի Հայը ոչ
միայն ամեն տեսակ հացահատիկների և բրնձի
մշակութեամբ է պարապում, այլ և անասնարու-
ծութեամբ և այգեպանութեամբ։ Ուտիացին իւր
տան չորս կողմը զարդարում է զանազան տեսակ
պտղատու այգիներով, որոնց մէջ հազարաւոր և
բիւրաւոր թթենու մատաղահաս ծառեր է տընկ-
ում, յատկապէս մետաքսի որդերին կերակրելու
համար։ Մետաքս, որ Ուտիացոց աշխարհի ազգա-
բնակութեան գլխաւոր և շահաւէտ պարապմանց
ճիւղերից մինն է։ Այգիներում և տան մօտակայ
արօտատեղերում նոյնպէս դուք կտեսնէք ընտիր
կաղնու բազմաթիւ տնկարաններ՝ ուղիղ և կա-
նոնաւոր գծերի ուղղութեամբ տնկուած շարիշար,
որոնք առատ տարիներին ահագին արդիւնք են
տալիս ժրաջան մշակող գիւղականին։ Ուտիացոց
աշխարհում խաղողի վազի մշակութիւնը իւր
նախնական անդրջրհեղեղեան վիճակի մէջն է դեռ
ևս. այսինքն՝ խաղողի վազերը առհասարակ փա-
թաթուած են լինում ահագին ծառերի վրայ։ Այն-

պիսի հինաւուրց խաղողի վազեր կտեսնէք, ո-
լոնք մարդուս ոտքի հաստութեամբ են, ահագին
հաստութեամբ և բարձրութեամբ ծառի արմատից
սկսած մինչև կատարն են բարձրանում և փա-
թաթուում են բոլոր ճիւղերի վրայ։ Այսպիսի հի-
նաւուրց խաղողի վազը առատ տարին տալիս է
մի ահագին սայլ լիքը խաղող։ Բայց ողկոյզները
խիտ տերևների տակ ծածկուած լինելու պատճա-
ռով ընդհանրապէս այս կողմերում խաղողը լաւ
չի հասունանում և հետևաբար գինին լինում
է թթու, թոյլ ու անգոյն։ Սակայն աշխատասէր
Ուտիացին ոչ մի կաթիլ գինի չի ծախի իւր մա-
ռանում գետնի տակը թաղուած մի քանի տաս-
նեակ լիքը կարասներից. այլ ձմեռնային ամիս-
ներին՝ ուրախութեան, նշանագրութեան ու հար-
սանեաց և բարեկենդանի ժամանակ՝ Մուղանի ա-
նապատի և Կուր գետի ափերից որս բերած խո-
զի խորոված ի վրայից կխմէ իւր թթուաշ գինին
և կուտեցնէ ու կխմցնէ իւր տան պատուական
հիւրերին։ Ընդհանրապէս Ուտիացոց աշխարհի
դաշտային բոլոր աշխատանքները կատարում են
բացառապէս տղամարդիկ, իսկ տնայինները՝ կա-
նայքն ու հարսները և մատաղահաս աղջիկները։

Դ

ԿԱՆԱՆՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՎԻՃԱԿԸ

Տնային բոլոր աշխատանքները կատարում
են բացառապէս կանայք։ Ահա այդ աշխատանք-
ները. կարել, ձևել, լուանալ, բուրդ գզել և մա-

նել, աղբիւրից կամ գետից ջուր կրել ամեն օր,
կերակուր եփել, հաց թխել, շատ տներում ամեն
օր, որ մի տաժանելի գործ է. սերմացու ցորեն,
բրինձ, գարի և կորեկ ընտրել, կթան գոմէշներն
ու կովերը կթել, նրանց նորածին ձագուկներին
խնամել, ժածուն ու իւղ պատրաստել, տնային
թռչուններին կերակրել և նայել։ Ամառնային ա-
միսներին, թթենու ժատաղահաս ճիւղերը կտրա-
տել օրը երեք անգամ, շալակով այգուց տուն
կրել և մետաքսի որդերին կերակրել և լաւ խնամք
տանել, կոկոնները քաղել, չորացնել արևի տակ,
իսկ ընտիր տեսակի կոկոններից սերմացու վեր-
ցնել ու սերմերը հաւաքել մանր տոպրակների մէջ.
պտուղների հասած ժամանակ, կաղնու և ընկու-
զենու ծառերը թափ տալ ու ժողովել, քաղած
խաղողն ու այլ և այլ պտուղները զամբիւղներով
կրել և տուն հասցնել և այլն և այլն։ Կարճ խօս-
քով՝ ուտիախօս և թրքախօս Հայ կանայք տնայ-
ին աշխատութեան մէջ աւելի շատ են աշխատում
և մեծ գործ կատարում, քան թէ՝ իրենց խստա-
պահանջ ամուսինները դաշտային աշխատութեան
մէջ։ Բայց ցաւելով պիտի ասել, որ ամբողջ եր-
կրագնդիս երեսին ոչ մի տեղ, ոչ մի երկրում և
գուցէ նոյն իսկ վայրենիների մէջն անգամ կին
ասուած արարածը այնպիսի ցաւալի սարկական
ու ողբալի վիճակի մէջ չէ, ինչպէս որ Ուտիացոց
դժբախտ երկրում։ Այս ծանր և անվերջ աշխա-
տութեանց պատճառով ամբողջ օրը, առաւօտեան
արշալոյսը դեռ չբացուած, Ուտիացի Հայ կինը
անդադար աշխատում է շոգեշարժ մեքենայի պէս

և արագ-արագ վազում է աջ ու ձախ, որպէս զի ամեն բանին հասնելու հնար ու միջոց ունենայ։ Այս դեռ ոչինչ է։ Սակայն անտանելին այն է, որ ընտանիքի տղամարդը լինի իւր ամուսինը, կամ նրա փոքր եղբայրը (տագրը) դաշտից տուն եկաւ թէ չէ, հարսը պարտաւոր է նրա ոտքերը լուանալ կոնքի մէջ սառը ջրով։ Նրա ձեռքերին ջուր լցնել և ձեռսրբիչ տալուց յետոյ կայծակի արագութեամբ վազել դէս ու դէն, որպէս զի նրա համար կերակուր և հաց բերի։ Աստուած մի արասցէ, եթէ հարսը մի փոքր ուշ բերի կերակուրը, կամ բերած ափսէների շարքում յանկարծ աղը կամ պղպեղը մոռացած լինի և կամ հէնց մածնի, կամ կերակրի ու հացի մէջ մի մազ երևայ, այն ժամանակ վայն է եկել այն դժբախտ հարսի գլխին։ Տղամարդը կատաղի առիւծ է դառնում, գոռում, գոչում է խեղճ ու անօգնական հարսի վրայ, կարկտի պէս զզուելի հայհոյանքների հեղեղներ է թափում նրա հօրն ու մօր հասցէին։ Իսկ երբեմն էլ լինում են այնպիսի անհամբեր և կատաղի արարածներ, որոնք առանց երկար ու բարակ մտածելու, ինչ որ իրենց ձեռքն է ընկնում, լինի պղնձէ կամ հողէ աման, քար ու փայտ շպրտում են հարսի վրայ, որից շատ անգամ նրա մարմնի զանազան մասերն է կապտում, իսկ շատ անգամ էլ նրա կողերն է ջարդւում, որով կատարելապէս խախտւում է նրա առողջութիւնը։ Դիմադարձութիւն անել, պատասխան տալ, կամ այսպիսի անխիղճ հարուածի մասին որևէ ձայն ու շշուկ հանել, երբէք չի կարող անխօս և կա-

մաւոր մունջ դարձած դժբախտ հարսը, այլ իւր սրտի խորքից ամ կքաշի, սրտայոյզ յոգոց կհանի, օղիկ մօղիկ գալով, վիրաւորուած՝ կքաշուի տան մի անկիւն և լուռ ու մունջ արցունք թափելով, կանիծէ իւր ծնած սև օրը։ Ահա այսպիսի խստասիրտ և անխիղճ մարդկանց շնորհիւ, մանկամարդ և գեղատեսիլ հարսերից շատերը հալ ու մաշ լինելով, մոմի պէս մարում են կամաց-կամաց և հանչում են յաւիտեան։ Չնայելով որ ուտիախօս և թրքախօս Հայ կանայք իրենց վարք ու բարքի մաքրութեամբ, իրենց ամօթխածութեամբ և պարկեշտութեամբ, իրենց ամուսնական անսահման հաւատարմութեամբ և հաստատակամ առաքինութեամբ ամբողջ աշխարհիս երեսին նըմանը չունին ոչ մի տեղ և ոչ մի ժողովրդի մէջ, այսու ամենայնիւ ուտիախօս և թրքախօս կանայք ապրում են կատարեալ ստրկութեան մէջ, մինչև ցարդ, բառիս բուն և ընդարձակ նշանակութեամբ։ Ուտիացի կինը կամ հարսը անխօս ու անլեզու մի արարած է, որին մի հասարակ ու չնչին բանի համար ոչ միայն իւր մարդը կարող է ծեծել նրան, հայհոյել և հաղար ու մի տեսակ նախատական խօսքերով այրել ու խոցել նրա անմեղ սիրտն ու հոգին, այլ և ընտանիքի ամեն մի արական անդամը նոյնպէս կարող է նրան հայհոյել և անխղճաբար ծեծել իւր քէֆի ուզածի չափ։ Ահա մի տարաբախտ աշխարհ, ուր խաւարն ու տգիտութիւնն է թագաւորում, ուր կոշտ ու կոպիտ ոյժը իւր աւերիչ ներգործութիւնն է ունում։ Ահա թանձր խաւարի մէջ թաղուած մի

դժբախտ երկիր, ուր հայ կանայք ողբալի վիճակի մէջ են, որոնք ոչ միայն իրենց կամքն ու ցանկութիւնը յայտնելու իրաւունքից զուրկ են, այլ և իրրև խօսուն և բանական արարածներ, բացի իրենց դաժան ամուսնուց, տան անդամների առական սեռի մարդկանց հետ ձայնով խօսելու իրաւունք անգամ չունին։ Տէրը մի արասցէ, նոյն իսկ որևէ դժբախտութեան կամ փորձութեան միջոցին ձայն հանել, կամ աղաղակ բարձրացնել անգամ չեն կարող. այլ միայն ձեռքի կամ գլխի հաւանական և բացառական պէսպէս շարժումներով եթէ կարողացաւ միայն հասկացնել իւր միտքը, լաւ, եթէ ոչ՝ թշուառ հարսը իւր երեսը ծածկող թանձր քողի տակից՝ պիտի փսփսայ տան մէջ գտնուող երեխայի ականջին մի որևէ խօսք, իսկ սա էլ իւր թոթով լեզուով պիտի հասկացնէ ընտանիքի ամեն մի իրեն պատահող անդամին։

Ե

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՆՈԽՈՒ ԳԱԻԱՌՈՒՄ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՃԵԼՈՒ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՈՒՏԻԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Շաքու (Նուխու) և Շամախու նախկին խաների հարեմների թանկագին զարդերը եղել են Հայերից և Վրացիներից բռնութեամբ խլուած սեաչեայ նորատի մանկահասակ հրաշագեղ Հայուհիներն ու Վրացուհիները։ Այս անտանելի չարի-

քից խուսափելու համար Ուտիացիների նախնիքները սկսում էին ծածկել թանձր քողով բոլոր օրիորդների և նորատի հարսների երեսները՝ որպէս համեստութեան և ամօթխածութեան նշան։

Երկրորդ՝ սկսում էին նշանագրել երկսեռ մանուկներին նոյնիսկ օրօրոցում, որի նշանը լինում էր «բէշիքերթմա», այսինքն՝ օրօրոցի վերևի գլանաձև փայտի վրա խաչ քաշել կամ կախել արծաթէ մի փոքր դրամ (20 կոպ.)։ Հարսնացու աղջիկն ու տղան երբոր դառնում էին 9—10 տարեկան, պսակում էին նրանց, որպէս զի մատաղահաս կոյս աղջիկներին կարողանան փրկել տրոփոտ պարսկական խանների և գաղանաբարոյ բէկերի բռնի յափշտակութիւններից։ Ի դէպ է ասել, որ տողերիս գրողի մայրը լինելով գեղանի աղջիկ և ինքն էլ նշանաւոր հարուստի զաւակ, հօրս մայրը պսակել է տալիս իւր 12 տարեկան որդուն 9 տարեկան գեղանի Մարիամի հետ և երեք տարի իւր ծոցում պահելուց յետոյ միայն յանձնում է իւր 12 ամեայ հարսին 15 տարեկան որդուն։ Որոնցից սերուում են 15 տղայ և մի աղջիկ։ Ռուսաց տիրապետութիւնից յետոյ բռնակալ խանների մոցրած սովորութիւններն ու կարգերը թէև անդարձ կորան, բայց «բէշիկքերթմա»— օրօրոցի վրայ խաչ քաշելու վատ սովորութիւնը և անչափահաս երեխաներին պսակելու վայրենի աւանդութիւնը, տարաբախտաբար, մինչև ցարդ մնացել են անփոփոխ և անկորուստ։

Ուտիացոց աշխարհի Հայ ժողովրդի ջնջման և ինքնասպանութեան գլխաւոր պատճառներից մինն

էլ այն է, որ յղի կանանց վրա կարևոր խնամք և պէտք եղած հոգ չեն տանում, ինչպէս որ հարկն է։ Յղի կինը (իմա 15—16 տարեկան) նոյն իսկ իւր յղութեան վերջին 8—9-րդ ամիսներին աշխատաւոր եղան պէս բանում է այնպէս, ինչպէս որ ընտանիքի միւս անդամներն են աշխատում։ Այսինքն՝ աղբիւրից կամ գետից, կուժն ուսին, նա ջուր է կրում, շատ անգամ բորիկ ոտքով, որով սաստիկ խոնաւութիւնից նա ստանում է յաղացաւ և ուրիշ հիւանդութիւններ։ Մետաքսի որդերին կերակրելիս, շալակով թթենու թարմ ոստեր, մրգեղէնների քաղելու միջոցին՝ մրգերով լի զամբիւղներ և այլ ծանրութիւններ կրելով, յղի կանայք մասամբ վիժում են և մասամբ էլ ստանում են մէջքի և ողնաշարի թուլութիւն։ Իսկ ծննդաբեր կանանց վիճակը աւելի քան ողբալի է։ Երկունքի ցաւն սկսուելուն պէս, դժբախտ յղի կնոջը ձգում են մի մութ ու խոնաւ գոմի մէջ, ուր մաքուր օդ չկայ, ուր լոյս չկայ, որպէսզի ծննդաբերութեան պատճառով իրենց սովորական բնակարանը, իբր թէ, չմարամուի (չապականուի)։ Այդ գոմի մէջ հաւաքւում են տան անդամներից սկեսուրը (բիանան), տատմէրը (մանկաբարձուհի) —հարևաններ և բարեկամ կանայք, որոնք հազար ու մի տեսակ տանջանքներ տալով թշուառ հարսին, կամ երկունքից ազատում են նրան մի կերպ կիսամեռ վիճակի մէջ և կամ իւր նորածին զաւակի հետ ուղարկում են դէպի միւս անանց աշխարհը։ Ամբողջ Նուխու գաւառում շատ դժուար է բժիշկ գտնել, եղածն էլ ապրում է այնտեղ,

ուր սովորաբար գաւառական ոստիկանն է ապրում, հէնց միայն այն գիւղն էլ օգտւում է. իսկ մի քանի տասնեակ գիւղեր բոլորովին զուրկ են բժշկից օգտուելու հնարաւորութիւնից։ Իսկ Ուտիացոց աշխարհում կրթուած և մասնագէտ մանկաբարձուհիների գոյութեան մասին նոյն իսկ մութ գաղափար անգամ չունին։ Այն ինչ, ի դէպ է ասել, որ բաղմամարդ Նիժ գիւղաքաղաքում մի բժիշկ իւր օգնականով և մի հատ էլ մանկաբարձուհի, որ իմանալիս լինէր թէ հայերէն և թէ թուրքերէն լեզուները, ահագին փրկարար գործ կարող էին կատարել։ Ահա երիտասարդ համալսարանաւարտ Հայ բժշկի և մանկաբարձուհիների գործունէութեան համար լայն և ընդարձակ ասպարէզ, ուր կարող են մարդասիրական թէ մեծ գործ կատարել և՛ թէ նիւթապէս ու բարոյապէս լի ու լի շահուել։ Ահա հէնց այս իսկ պատճառներով Ուտիական աշխարհի դժբախտ Հայ ժողովրդի թիւը չի աճում, իսկ ապրողների արական սեռը թոյլ, անգոյն և տարիքն էլ շատ կարճատև է լինում—45—50 տարեկան։ Ահաւասիկ ձեզ պերճախօս փաստեր։ Ջալալեան Սար. Սրբազանը 1848 թ. երբոր ճանապարհորդում էր Ուտիացոց աշխարհում, Նիժ ուտիախօս գիւղացի բնակիչների թիւն եղել է ընդամենը 500 տուն *)։ Անցել է այն օրից մինչև ցարդ ուղիղ 55 տարի և այսքան երկար ու ձիգ տարի-

*) Տես «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», երես 381։

ների ընթացքում միևնոյն այդ գիւղաքաղաքի բնակիչների թիւը հասել է 800-ի, որ շատ չնչին տոկոս է։ Ուստի մասնաւորապէս Նուխու այժմեան փոխանորդ բարձրաշ. Սիօն վարդապետի և ընդհանրապէս Ս. Էջմիածնի ու Ն. Ս. քաղցր ուշադրութիւնն եմ հրաւիրում Նուխու գաւառի այս վայրենի և մանաւոր սովորութեան արմատախիլ անելու վերաբերութեամբ։ Իսկ Թիֆլիզի Ներսիսեան Հոգևոր դպրանոցի և Գևորգեան ճեմարանի վարչութիւնները շատ գեղեցիկ գործ կատարած կլինէին, եթէ այդ դժբախտ երկրի, թանձր խաւարի և տգիտութեան մէջ թաղուած Հայ ժողովրդի ընդունակ և սրամիտ զաւակներից իւրաքանչիւր տարի տասնեակ պատանիներ ընդունէին իրենց լուսաւոր յարկի տակ և կրթէին նրանց սիրտն ու հոգին այժմեան գիտութեանց կենսատու լուսով։ Յուսանք և սպասենք։

Զ

ՈՒՏԻԱՑԻ ՀԱՅԵՐԻ ԱՆՆՄԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆՏԻՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուտիացի Հայը ջերմ սրտանց սիրում է իւր հայրենի օջաղը, իւր տունն ու տեղը, իւր հողն ու ջուրը, իւր թաւոտ անտառներն ու դաշտերը, իւր վարելահողերն ու մարգագետինները և իւր պաշտելի սրբավայրերը։ Այնպէս որ նա ուրիշ օտար երկիր երբէք չի գնայ և ոչ մի պայմանով

ամենևին չի հեռանայ իւր սիրելի հայրենի աշխարհից։ Լի հաւատով, հաստատ յուսով և բուռը սիրով նա սիրում ու պաշտում է իւր ս. կիրօնքն ու մայրենի հնադարեան սուրբ եկեղեցին, որոնց համար նա պատրաստ է զոհել իւր գլուխը։ Նահապետական պարզ և մաքուր սրտանց նա սիրում է իւր ննման հաւատարիմ ամուսնուն և իւր երեխաներին, թէև մի չնչին բանի համար շատ անգամ անողորմաբար հայհոյում ու ծեծում է իւր դժբախտ ամուսնուն։ Բայց այսուամենայնիւ Ուտիացի կնոջ անվերջ համբերութիւնն ու ամուսնական հաւատարմութիւնը, նրա մաքուր վարքն ու բարքը օրինակելի կարող է համարուել Կովկասեան ամեն մի գիւղացի Հայ կնոջ համար։ Ուտիացի կնոջ վարք ու բարքի մասին եթէ մի փոքրիկ կասկած յայտնուի, կամ շշուկ լսուի, առանց ստուգելու սուտն ու զորը, այդպիսի դժբախտ կինը չարաչար կպատժուի մահով։ Աստուած չանէ, եթէ Ուտիացի մի կին համարձակուի սիրային յարաբերութիւն հաստատել ուրիշի հետ, այդպիսի վատաբարոյ կինը խստոյն սրախողխող կլինի իւր ամուսնու և կամ նոյն իսկ իւր հարազատ եղբօր ձեռքով։ Այս անողոք խստութեան պատճառով ընտանեկան կեանքը շատ մաքուր և անբիծ պահպանուած է այդ կողմերում։ Ուտիացի Հայը օժտուած է հետևեալ ընտիր յատկութիւններով՝ համարձակ, ճշմարտախօս, անվեհեր, պատուի նախանձախնդիր, տոկուն, չարքաշ, համբերող և անվերջ աշխատասէր է նա և իւր ուշքն ու միտքը լարած՝ նուիրուած

է միայն երկրագործութեան։ Ասածներիս թող ապացոյց լինի այն, որ Բագու-Թիֆլիզեան երկաթուղու գիծը բացուելուն պէս Ղարաբաղի, Շամախու, Թիֆլիզի, Գանձակի, Երևանի և ուրիշ տեղերի գիւղացիք վազեցին Բագու, շուտով հարստանալու և միլիոնների տէր դառնալու պատրանքով։ Կարճ խօսքով՝ Կովկասի զանազան անկիւններից հազարաւոր ու բիւրաւոր Հայ ընտանիքներ թողնելով իրենց հայրենի աշխարհը, իրենց պապական աղնիւ պարապմունքները, հետզհետէ գաղթեցին Անդրկասպեան երկրներից ոկսած, մինչև լայնածաւալ Ռուսիայի ամենահռաւոր ծայրերը։ Այն ինչ Ուտիացիները՝ Բագուին շատ մօտիկ լինելով հանդերձ նրանցից ոչ ոք չշարժուեց իւր տեղից և ոչ ոք դէս ու դէն ընկած չթափառեց և երբէք էլ չի թափառի, քանի որ Ուտիացիների սիրտն ու հոգին ամուր կապուած է իւր աշխարհի օդի ու ջրի, նրա պտղաբեր հողի և նուիրական սրբավայրերի հետ, քանի որ նրա ուշքն ու միտքը, լարուած ու կենդրոնացած է յատկապէս միմիայն երկրագործութեան վրայ, որից զուրս նա իւր գոյութիւնը վտանգուած է համարում։

Փորձի համար Ուտիացի Հային պատմեցէք աշխարհիս զանազան մասերի մի քանի գեղեցիկ վայրերի և սքանչելի տեղերի գոյութեան մասին. նա երբէք չի հաւատայ ձեր ասած խօսքերին, վասնզի նրա կարծիքով ու համոզմունքով Ուտիացոց աշխարհից լաւ երկիր ուրիշ ոչ մի տեղ չի լինիլ ամբողջ աշխարհիս վրայ։ Փորձելու համար տարէք նրան և ցոյց տուէք Թէկուզ Թիֆլիզ հայաբնակ քաղաքի փառաւոր եկեղեցիներն ու բազմաթիւ դպրոցները, հոյակապ տներն ու թանկագին ապրանքներով լիքը մեծամեծ խանութները, որոնք ամեն մի չտես Հայ գիւղացու ախորժակն են գրգռում, աչքերն են շլացնում և նրա սիրտն ու հոգին են գրաւում։ Այն ինչ հայրենասէր Ուտիացի Հայը այս ամենը տեսնելով, հաւանում է միայն փառաւոր եկեղեցիները, բազմաթիւ դպրոցները և ընտիր նժոյգ ձիերը։ Բայց մի ամիս Թիֆլիզում ապրել նա չի ուզի, եթէ մինչև անգամ Թիֆ. բոլոր ճոխութիւնն ու հարստութիւնը իրեն նուիրելու լինիք։ Նա գոհ սրբտանց ամ քաշելով, իւր սրտի խորհուրդն ու տենչանքը կասէ ձեզ այսպէս. «Ա՜խ, երանի այս քարաշէն տներն ու եկեղեցիները, այսքան գեղեցիկ դպրոցները շինուած լինէին մեր գիւղում, հէնց մեր այգու շագանակի ծառի մօտ, որ անխիղճ և անօրէն թուրքերը չկարողանային այրել ու կողոպտել նրանց, որ մեր գիւղացի հայն էլ կարողանար կարգին եկեղեցի ունենալ և իւր զաւակներին կրթել տալ այս հրաշալի դպրոցների լուսաւոր յարկի տակ։ Ա՜խ, երանի թէ այս սիրուն և ամեհի նժոյգները լինէին մեր գիւղերում, որ հեծնէինք նրանց վրայ և գնայինք ս. Եղիշէի առաքելոյ վանքը ուխտի և կամ Մուղանի անապատը՝ Կուր գետի ափերին առատութեամբ վայրենի խոզեր ու եղջերուներ որսայինք»։ Ինչպէս ասացի, Ուտիացին չափազանց համբերող ու չարքաշ է, բայց երբոր իւր համբերութիւնը անց-

նի իւր չափն ու սահմանից, այն ժամանակ նա մի կատաղի առիւծ կհանդիսանայ իւր թշնամու հանդէպ. այն ժամանակ նա իւր հարազատին, նոյն իսկ իւր զաւակին անգամ չի խնայի։ Նա իւր սոսկին չարաչար կպատժի և իւր սրտի ոխը կհանէ նրա եօթ սերունդից՝ իւր հակառակորդներին խսպառ բնաջինջ անելով։ Ուտիացին միևնոյն ժամանակ պէտք եղած տեղը նաև բարեսիրտ է, չափազանց հիւրասէր, ընկերասէր, սրտաբաց, գործունեայ, համերաշխ և միաբան է ամեն մի բարի և հանրաշահ գործի մէջ։ Վերջին ծայր նա անչափ պատուազգաց և պատուասէր է. եթէ մէկը համարձակուի նրա ընտանիքի պատիւը շօշափել, կամ նրա սրբազան կրօնի, հաւատի և ազգութեան մասին անարգ մի խօսք ասել և կամ մի թեթև ծաղրածութեան ակնարկութիւն անել, այդպիսի յանդուգն անմիտը տեղն ու տեղը կը-պատժուի իսկոյն ևեթ։ Ապացոյց ասածներիս, պատմեմ մի դէպք, որ տեղի ունեցաւ իմ ներկայութեամբ, որ իմ կեանքիս մէջ երբէք չեմ մոռանայ։ 1875 թ. սկսած, երբոր ես Թիֆլիզումն էի, Ծննդեան և Զատկական մեծ տօներից առաջ միշտ հրաւիրուում էի ինձ մօտ հիւրեր Ուտիացոց աշխարհից, յատկապէս Թրքախօս և ուտիախօս իմ ազգականներից նրանց, որոնք իրենց ծագումով, դիրքով և հարստութեամբ մեծ ազդեցութիւն ունին գիւղացոց վրայ. որպէսզի անձամբ դան, տեսնեն ամեն մի նորութիւն և լաւ բան և ապա գնան իրենց հայրենի գիւղերում ասեն, խօսեն և ցոյց տան այն ամեն նորագոյն առարկաները, ո-

րոնք յարմար և պիտանի են իրենց համար։ Մի անգամ (1880-ական թուականներին) Միրզաբեկլու Թրքախօս Հայաղաւան գիւղացի յայտնի հարուստ և բարեգործ գիւղական դատաւոր (սուդիա) Սահակ Սագինեանը (տողերիս գրողի հարազատ մօր քեռին) մի քանի ուրիշ պատուաւոր գիւղացիների հետ՝ եկել և իջևանել էին ինձ մօտ հիւր։ Ծննդեան տօնի օրը Զրօրհնեաց շքեղ հանդէսը անջինջ և խոր տպաւորութիւն էր արել իմ պարզամիտ քրիստոնեայ հիւրերիս սրտի, հոգու և բոլոր զգացմանց վրայ։ Երեկոյեան, տնօրհնէքից յոգնած ու դադրած երբ հասայ տուն, արտասուքն աչքերին մօտենալով ինձ քեռիս, յուզուած շեշտերով սկսեց խօսել այսպէս։—«Բաջողլի տէրտէր Ջան, բուգիւն վանքտայ, Քիւրուն իչինայ խաչ սուվայ սալանդայ նեալեար գեօրդիմ. եախշի խաչվառլար, չօխ բահալի շուրջառլար, իշիմ իշիմ իշիլդիան գեօզալ բուռվառլար։ Էլա բիլասանքի, անամդան բուգիւն զողդում, թեազադեան էրմանի օլդում։ Ջան տէրտէր, սարախ ժաղեահան օլմրսան, գեալ գեղախ, բիր եախշի խաչվառ ալախ բիզիմ քիլիսադան իչուն»։ Այսինքն՝ «քրոջորդի տէրտէր Ջան, այսօր Վանքում (Թիֆլիզի վանաց աւագ եկեղեցում) Կուր գետի մէջ խաչը ջուր ձգելիս ինչեր տեսայ.—լաւ խաչվառներ, թանկագին շուրջառներ, ցոլցլուն, փայլուն և գեղեցիկ բուռվառներ։ Այնպէս իմացիր, որ կարծես թէ մօրիցս այսօր ծնայ, նորից Հայ դարձայ։ Տէրտէր Ջան, վաղն ազատ կլինի՞ս, ա-բի գնանք մէկ լաւ խաչվառ առնենք մեր (գիւ-

զական) եկեղեցու համար»։ Տներից յետոյ քեռուս հետ միասին գնացինք առաջնակարգ հարուստ հայ վաճառական Տ. Ն.-ի խանութը, որ գտնուում էր Թիֆլիզի Հայոց շուկայ կոչուած փողոցի վրայ։ Դիմելով հարուստ հայ խանութպանին, խնդրեցի, որ ցոյց տայ ինձ Հայկական ձևով շինուած լաւ խաչվառներ։ Կարճամիտ գործակատարը ցոյց տուեց մեզ կտաւի վրայ նկարուած մի քանի տգեղ և անճաշակ բաներ, որոնք անպէտք բաներ էին։ Ես պահանջեցի, որ լաւ տեսակները ցոյց տան, բայց քեռիս մի փոքր բարկացած՝ աւելացրեց. — «Եախշըսին գեաթրուն, մեան փուլ վերաջաղամ, միւֆտա խստամիրամքի, բուղադար նազ-տուզ էյլիրսըզ»—Լաւը բերէք, ես փող պիտի տամ, ձրի խօսք չեմ ուզում, որ այսչափ նազ ու տուզ էք անում։ Քեռիս դեռ ևս չէր վերջացրել իւր խօսքը, որ յանկարծ միամիտ Թիֆլիզցին ընդհատեց նրան և զարմացած հարցրեց ինձանից.—«Վահ, Տէրտէր, էս վո՞ւնց է պատահի, վուր Թուրքը ուզում է խաչվառ առնի մեր Հայու ժամի համա. դանա՞, ձիր երգրի Թուրքիրը մեր խաչվառին հաւատումի՞ն»։ Ո՛հ, Տէր իմ Աստուած, քեռիս կրակ ու բոց կտրուեց իրեն ատելի «Թուրք» խօսքի պատճառով և ձեռքը տանելով իւր կողքից կախուած դաշոյնի դաստակին, մաղ ճնաց, որ մաս-մաս պիտի անէր հաստավոր հային։ Հազիւ հազ բռնեցի նրա ձեռքը ուժգին թափով և աղաչելով խնդրեցի, որ դաշոյնը իւր պատեանը դնէ և իմ ներկայութեամբ հայի արիւն չթափէ, այլ խօսքով յայտնի իւր ասելիքը։ Դէհ, քեռիս

տեսնելով, որ թէ խանութպան հարուստ հայը և թէ նրա գործակատարները վախից սարսափած՝ դէս ու դէն փախչելով ծակուծուկ մտան, սաստիկ զայրացած՝ դառաց նրանց վրայ.—«Դուք, վախկոտ և հաստափոր ու հաստագլուխ Հայեր, միթէ չգիտէ՞ք, որ անօրէն Թուրքը խաչվառ չի գնի, այլ խաչն ու խաչվառը ջարդ ու փշուր կանի. իսկ նրա ջերմ երկրպագու քրիստոնեային ընդ՚ինչ կանէ այս աշխարհիս երեսից։ Ափսոս և հազար ափսոս, որ այսպիսի լուսաւոր և գեղեցիկ քաղաքումն էք ապրում, բայց աշխարհիս խ՚ին ու չարից, սև ու սպիտակից ոչ մի տեղեկութիւն չունիք։ Մենք, մի բուռն թրքախօս Հայերս, թէև անօրէն լեռնականներին և արիւնարբու մահմեդականներին զոհ տուինք մեր թանկագին մայրենի լեզուն, մեր կեանքն ու հարստութիւնը, բայց մեր կրօնքն ու հաւատը, մեր ազգութիւնն ու մեր ս. եկեղեցին արեան գնով անխախտ ու հաստատ պահեցինք։ Իսկ դուք, վախկոտ և միամիտ Թիֆլիզցիներդ՝ մեզ արհամարհելով ու ծաղրելով, մեզ Թուրք էք անուանում հա...»։ Հազիւ կարողացայ հանդարտեցնել զայրացած քեռուս արդարացի բարկութիւնը։ Մի ուրիշ խանութից խաչվառ գնելով, մի քանի օրից յետոյ քեռուս իւր ընկերների հետ ճանապարհ ձգեցի դէպի իրենց սիրելի հայրենի աշխարհը։ Ուտիացի Հայը այսպէս չափազանց նախանձախնդիր է իւր ազգային ս. եկեղեցուն, իւր ս. կրօնին և այն ամենին, որ իւր սրտին շատ մօտ են։ Նամանաւանդ Նիժեցիք, որոնք շատ քաջ, անվախ և վարժ հրացանաձիգ են

համարում ամբողջ Նուխու գաւառում և փոքրահասակ երեխայից սկսած մինչև զառամեալ ծերունին զէնք գործածել, աւազակ և արիւնարբու մարդասպան Թուրքին սարսափեցնել և տեղն ու տեղը պատժել՝ շատ լաւ գիտեն։ Նուխու ամբողջ գաւառի զանազան գիւղերում, շաբաթը մի-մի օր տօնավաճառ է լինում, ուր երկրի ամեն տեսակ բերքերի առուծախս է լինում, ահագին բազմութիւն է հաւաքւում։ Հարկաւ բազմութեան մեծ մասը լինում են Թուրքեր, որ շատ անգամ մոլեռանդ Մահմէդի անզուսպ զաւակները՝ օր ցերեկով ծաղր ու ծանակ են դարձնում քրիստոնեայի կրօնքն ու հաւատը, որից ծագում են ընդհարումներ և կռիւներ հայերի և Թուրքերի միջև։ Այդպիսի դէպքերի ժամանակ, եթէ միքանի տասնեակ նիժեցիներ պատահեն, անպայման յաղթանակը փոքրաթիւ հայերի կողմն է մնում։ Բայց Նիժի տօնավաճառի ժամանակ եթէ Թուրքը համարձակուի քրիստոնէական կրօնի մասին անարգ մի խօսք ասել, այն ժամանակ վայն է եկել Թուրքերի գլխին։ Բաւական է, որ խիզախ ու անվախ նիժեցիներից մէկն ու մէկը իւր բռունցքը բարձրացնէ օդի մէջ և՝ «արա բէշ վիչի դուղա»—այ մեր եղբայր խփիր» գոռայ։ Կայծակի արագութեամբ, մէկ էլ կտեսնէք, որ հարիւրաւոր նիժեցիներ, միասիրտ ու մի հոգի, հարիւրաւոր Թուրքերի քիթ ու պռունկ ջարդելով և գլուխներ պատռելով, ամբիւնլուայ արին նրանց։ Կարծէք թէ՝ «մէկը հազարի և հազարը մէկի համար» հրաշալի սկզբունքը

չափած ու ձևած է յատկապէս քաջասիրտ նիժեցիների համար։ Այս իսկ պատճառով, ամբողջ Նուխու գաւառի կատաղի և անզուսպ Թուրքերը վախում ու սարսափում են միմիայն քաջամարտիկ Նիժեցիներից։ Ոտքից գլուխ զինուած Թուրքը եթէ հանդիպի անզէն նիժեցուն, նրան մօտենալ և Թալանել չի համարձակուի երբէք։ բայց եթէ Թրքախօս կամ սարեցի հայախօս Հային պատահի, նրան կհայհոյէ, ձեռքին եղած-չեղածը կխլէ, իսկ ընդդիմացողին էլ կսպանէ և ապա հանդիստ խղճով կշարունակէ իւր ճանապարհը։

Է

ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Ուտիացոց աշխարհի Թրքախօս և ուտիախօս գիւղերի մէջ միմիայն Վարդաշէն գիւղաքաղաքը գտնուում է բարեյաջող վիճակի մէջ՝ թէ բարոյապէս և թէ տնտեսապէս։ Այն էլ յատկապէս այն պատճառով, որ Հայոց Աշոտ Երկաթ Թագաւորի ժամանակակից Ուտիացի յայտնի Ցլիկ Ամրամի հարազատ տոհմից սերուած և մինչև մեր օրերը հասած, այժմեան Սիլիկեան եղբարք, իրենց զինուորական կրթութեամբ, իրենց հեռատես ու հայրենասէր ձգտումներով և առևտրական-դոր-

ծարանական *) ձեռնարկութեամբ, մեծապէս նը-
պաստել են վարդաշէնցիների մտաւոր և բարոյա-
կան ու տնտեսական յառաջադիմութեան։ Նմանա-
պէս Առաքել Մուրատեան և Նիկողոսեան եղբարք
(հայ և ռուս յայտնի հրապարակախօս պ. Գր.
Նիկողոսեանի հարազատները) որպէս առաջաւոր
և նշանաւոր Հայ գերդաստաններ խթան են եղել
Վարդաշէնի յառաջադիմութեան գործին։ Վարդա-
շէնում հարիւրաւոր հայախօս և հայ գրաճանաչ
հայեր կան այժմս, այն ինչ Նիժ ուտիախօս գիւ-
ղաքաղաքը՝ Վարդաշէնի համեմատութեամբ, ա-
ռանձնաւոր ասպիճանի վրայ է կանգնած։ Նիժե-
ցիք իրենց թւով և անվեհեր քաջութեամբ ամ-
բողջ գաւառի բոլոր գիւղերի մէջ առաջին տեղն
են բռնում։ Նիժեցոց բարոյական և տնտեսական
վիճակը լաւ է, բայց ուսման, կրթութեան և ա-
ռուեստագիտութեան մէջ՝ ողբալի դրութեան մէջ
էին մինչև 1870-նական թուականների կէսը։
Ամենագին Նիժում և ոչ մի ատաղձագործ կամ կօշ-
կակար տեղացի արհեստաւոր չէիք գտնի։ 1876
թ. սկսած, իմ յորդորմամբ և համոզեցնելով՝ մի
քանի Թրքախօս և ուտիախօս գիւղերից բազմա-
թիւ պատանիներ ուղարկուեցան Կովկասեան
զանազան քաղաքները, որոնցից ոմանք ուսում և
ոմանք էլ պէսպէս արհեստներ սովորելուց յետոյ

*) Սիլիկեան եղբարք ունին Վարդաշէնում մետաքսի թել պատրաստող շոգեշարժ մի մեծ գործարան, որ իւր դրամագլխով և արտադրութեամբ մեծ օգուտներ է տալիս հայրենի գիւղաքաղաքի աղքատ բնակիչներին։

պիտի վերադառնային հայրենիք և իրենց ու-
սածները սովորեցնէին Հայ ժողովրդի զանա-
զան խաւերում։ Այդ սրամիտ պատանիների խմ-
բակների մէջ շատ երևելի եղան Գէորգեան ճեմ.
նախկին ուսումնաւարտ սան և համայնարանական
կրթութիւն ստացած Սարգ. Կուկունեան և Ա-
տուռածատուր Ոսկանեան։ Սրանցից վերջինը Նու-
խու Հայոց եկեղեց. ծխական երկսեռ դպրոցների
աւագ-ուսուցչի պաշտօնն էր վարում և որը յայտ-
նի էր իբրև լուրջ և խոհուն երիտասարդ, սրա-
նից մի 7—8 տարի առաջ, օրը ցերեկով, արիւ-
նարբու մի Թուրքի ձեռքով գնդակահար եղաւ
Զոռլու Թրքախօս Հայադաւան գիւղի կալերի մօտ։
Ահա այսպէս Նիժում այժմս թէև կան հայախօս
և գրաճանաչ շատ երիտասարդներ ու մի քանի
հատ էլ գրագէտ երիտասարդներ, բայց ընդհան-
րապէս ուսման և գիտութեան կողմից Նիժը
մնացել է շատ աննախանձելի վիճակի մէջ։ Իսկ
Թրքախօս Հայադաւան գիւղացիները ամենա-
թշուառ և սոսկալի դրութեան մէջ են. սէր, հաշ-
տութիւն, խաղաղութիւն, միաբանութիւն և հա-
մերաշխութիւն ամենևին չկայ սրանց մէջ։ Թուր-
քախօս Հայադաւան Հայերի հաւար շատ սովո-
րական բաներ են՝ իրար բամբասել, գրպարտել
և միմեանց կործանելու համար Թուրք ազգեցիկ
էֆէնդիների մօտ քսութիւն ու մատնութիւն անել և
նրանց ձեռքով իրենց արիւնակից ու ազգակից
Հայ եղբայրների տունը քանդել։ Կարճ խօսքով
Թրքախօս Հայ գիւղացիների մէջ մատնիչ ու
դայի դեր կատարողներ խիստ շատ կան, որոնք

ամեն մի գիւղի համար համարւում են կատարեալ պատիժ ու պատուհաս։ Այս իսկ պատճառով Թրքախօս գիւղացի Հայերը բարոյապէս մնանկացած, նիւթապէս մինչև կոկորդը պարտքերի մէջ թաղուած և Թուրք վաշխառուների ձեռքին կատարեալ ստրուկ դերի դարձած, տնտեսապէս քայքայուած ու ամենաթշուառ վիճակի մէջ են։ Ամեն մի գիւղում թէև կան մի քանի դրագէտ և հայախօս երիտասարդներ, բայց սրանք էլ մի առաջնորդող և ձեռներէց դեկավար չունին։ Ընդհանրապէս թէ ուտիախօս և թէ Թրքախօս գտնւում են թանձր խաւարի ու տգիտութեան մէջ թաղուած։ Ուր ոչ միայն ուսման, գիտութեան կենսատու ճառագայթները դեռ ևս չեն թափանցել, այլև երկրագործութիւնը, ինչպէս ասացի, երկրագործական մեքենաներն ու գործիքները իրենց նախնական հնադարեան աննախանձելի վիճակի մէջ են։ Գիւղական ամենակարևոր արհեստներ, որպիսիք են քարտաշութիւն ու որմնադրութիւն, ատաղձագործութիւն ու դերձակութիւն, երկաթագործութիւն ու դարբնութիւն, կլէկչութիւն ու պանրագործութիւն՝ թէև նահապետական վիճակի մէջ են, բայց և այնպէս այս արհեստները բացառապէս հկւոր հայերի և լեգվինների ձեռքումն են։ Ահա մի յեսընկած գաւառ, ուր մեծամեծ գործ կարող է կատարել Թիֆլիզի Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը, եթէ կթնատնտեսութեան փորձեր կատարէր Նիժ և Վարդաշէն գիւղաքաղաքներում։

Ը

ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱԿԱՆ ԵՒ ԻԴԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՅԺՄԵԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՒԸ

Ուտիացոց երկրի աղամարդիկը հագնում են Կովկասեան միւս Հայ գիւղացոց պէս. այն է՝ շապիկ, վարտիկ, անդրավարտիկ (գործուած շալէ շալվար), բաճկոն (արխալուղ) մէջքին կապում են կաշիէ կամ արծաթապատ գօտի, գլխին՝ ոչխարի հասարակ մորթուց գլխարկ (փափախ), ոտքերին՝ գուլպայ կամ բրդէ թելից գործած փաթաւայ (փաթաթոց), իսկ վերևից տրեխ (չարուխ) կամ բարձր կրունկով մաշիկներ (քօշեր), որ սովորաբար հագնում են պատուաւոր և հարուստ գիւղացիք։ Զմոռանամ ասել, որ ամեն մի գիւղացու անբաժան ընկերն է նրա սուր դաշոյնը, որ կախում է իւր գօտկուց և կամ չուխայի տակից խրում է գօտկի մէջ՝ արիւնարբու աւազակներից պաշտպանուելու համար։ Որսորդները կրում են իրենց ուսերի վրայ «չախմախլու» ասուած հրացան, որի անպէտք լինելը իրենք գիւղացիք էլ շատ լաւ են հասկանում։ Նոր ձևի հրացանի համար հոգի են տալիս, բայց երբոր յայտնի պատճառով այդպիսի հրացան չեն կարողանում ձեռք գցել, այն ժամանակ, անճարացած, հին ու անպէտք հրացան են գործածում։ Իսկ կանայք հագնում են մի տարօրինակ հագուստ, որ շրջակայ Թուրքերի և սարեցի հայա-

խօս հայերի կանանց հագուստից զանազանւում ու տարբերւում է ամեն բանով։ Ուտիացոց աշխարհի Հայ կանայք, իրենց գլխին փաթաթում են հասարակ լաթեր, որ ձուաձև կերպարանք է ստանում և որը կոչւում է դինգեայ։ Դինգեայի վերևից մինչև ականջները շարան-շարան կախում են արծաթէ դրամներ, որ թէ մանգալիս և թէ գլխով հաւանական կամ բացասական նշան տալիս (ըստորում կանայք բարձր խօսելու իրաւունքից իսպառ զուրկ են Ուտիացոց աշխարհում) զնգզնգալի ձայներ լսուին։ Դինգեայի վերևի արծաթէ շարան-շարան դրամների վերևից ծածկում են մետաքսէ գոյնզգոյն մի մեծ թաշկինակ, որի կէսը փռւում է կնոջ ուսերից մինչև գօտին, ողնաշարի ուղղութեամբ, իսկ միւս կէսը իջնում է երեսի և դէմքի վրայով մինչև ներքին ծնօտի կղակը, գլխի աջ ու ձախ և յետևի կողմից էլ՝ արծաթի շղթաների ծայրին յարմարեցրած տափակ և կեռ կարթերով (չանգալ) ամրացնում են գլխի բոլոր զարդարանքները, որպէս զի ճակատի արծաթէ աջ ու ձախ կողմը շարուած շարանները լինէին իրենց տեղում ամուր և պինդ։ Գլխի աջ ու ձախ կողմից, ականջների վերևից դէպի ներքև, մէկ թիզ կամ թիզուկէս երկարութեամբ և չորս մատի լայնութեամբ, հասարակ շորի վրայ կարուած դրամներով կախում են՝ այսպէս ասած, արհեստական ականջներ։ Ականջներ, որոնք յետ ու առաջ են օրօրւում, կնոջ շարժուելու և կամ արագ-արագ մանգալու ժամանակ և աննկարագրելի զնգզնգոցի ձայներ են հանում։ Իսկ մանկա-

հասակ նորահարսների արհեստական ականջները հիւսում են գոյնզգոյն մանր յուլունքներով և մէջ ընդ մէջ մեխակներով, որ առաւել գեղեցիկ և անուշահոտ երևան իրենց ամուսինների աչքերին։ Ուտիացի կանայք ընդհանրապէս խնայող և սակաւապետ են. նրանց ամեն օրուայ գործածական հագուստները լինում են ժամանակին չթից։ Իսկ տօն օրերին, Զատկին, Ծննդեան մեծ տօներին, հարսանիքներին և ուխտագնացութեան ժամանակ հագնում են զուտ մետաքսէ գոյնզգոյն թանկագին շորեր։ Ուտիացի Հայ կանայք հագնում են կարճ բաճկոն, որի թևերի վրայ՝ արմունկից սկսած մինչև ձեռքի թաթերը, շարում են երկու շարք արծաթէ կոճակներ, որոնք մի առանձին փայլ և գեղեցկութիւն են տալիս այդ հագուստին։ Իսկ բաճկոնի տակից հագնում են շապիկ և չափազանց լայն վարտիկ, որ միևնոյն ժամանակ շրջազգեստի ձև է ստանում և նրա պաշտօնն է կատարում։ Ուտիացի կանայք գուլպայ գործելու և պանիր պատրաստելու արհեստից միանգամայն զուրկ են. նրանք միայն կարողանում են բրդից թել մանել, ջուլալ, խուրջին և մետաքսէ սիրուն վերմակներ գործել։ Ձեռագործի և կար ու ձևի մէջ շնորհ և ընդունակութիւն ունեցող մեր յարգելի տիկիններն ու օրիորդները եթէ ամառնային արձակուրդներին շրջէին Ուտիացոց երկրում, ահագին և փրկարար գործ կարող էին կատարել։ Իրենք մի կողմից կհանդատանային և կկազդուրուէին, իսկ միւս կողմից՝ տնային տնտեսութեան վերաբերեալ նորանոր բաներ կսովորե-

ցնէին իրենց յետ մնացած և մահարբեր քնով ննջող քոյրերին։ Դէհ, հայրենասէր տիկիններ և ընկերասէր Հայ օրիորդներ, եթէ կամենում էք ձեր կեանքում մի բարի և օգտակար գործ կատարել, ամառնային ամիսներին շրջեցէք Ուտիացոց երկրում, որոնք ձեզ սիրով և գրկաբաց կընդունեն։ Դուք նրանց թէ շատ բան կսովորեցնէք և թէ նրանց նիստ ու կացը ուսումնասիրելով ու հետազօտելով՝ ինքներդ ևս շատ բան կսովորէք։

Թ.

ՈՒՏԻԱՑՈՑ ԵՐԿՐԻ ՅԱՅՏՆԻ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ՍԲՐԲԱՎԱՅՐԵՐԸ

Ա. ԵՂԻՇԷ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔԸ *)։ Այս վանքը շինուած է Նուխու հիւսիսային կողմը, Կովկասեան լեռնաշղթայի մի սարաւանդակի վրայ, ս. Եղիշէ առաքեալի ձեռքով։ Ս. Եղիշէ առաքեալը Յիսուսի 72 աշակերտներից մինն էր. նա Ուտիացոց և Աղուանից երկրներում քրիստոնէութիւն տարածեց և այս երկրումն էլ նահատակուեց անօրէն լեռնականների ձեռքով։ Պատմութիւնից յայտնի է, որ այս կողմերն այցելեց նաև մեր չքնաղխարհիկ Մեսրոպ Մաշտոցը, Աղուանից և Ու-

*) Թուրքերը անուանում են այս վանքին «Քեօհնայ օջաղ»—հին ուխտատեղի և Հայոց պէս երկիւղածութեամբ սիրում են նրան ու պաշտում։

տիացոց համար գրեր հնարեց, բազմաթիւ դպրոցներ բացեց և քրիստոնէութեան գործը դրեց աւելի հաստատ հիմքերի վրայ։ Այս վանքը՝ իւր հնութեամբ առաջինն է համարուում Ուտիացոց աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր վանքերի և սրբավայրերի շարքում, որ երկար ժամանակ Աղուանից աշխարհի կաթողիկոսարանն է եղել։ Վանքի օդն ու ջուրը զով ու շատ առողջարար է, իսկ տեղն ու դիրքը, իր առատ բուսականութեամբ, Կովկասեան բարձր ու անտառապատ լեռնաշղթաների հովանաւորութեամբ՝ ներկայացնում է մի ակնապարար տեսարան։ Վանքի արևմտեան կողմը լեռան կրծքին փռուած է Գիս Հայոց գիւղը, որ 18-րդ դարի վերջերում սարսափելի բռնութեամբ մահմեդական դարձած է, որոնց բերանում Գիս անունը փոխուել և դարձել է Քիշ, իսկ Եղիշէ առաքեալի անունն էլ Եաղիշ կամ Եախշի Առաքել։ Գիւղի ստորոտից փրփրադէզ և կատաղի համանուն Գիս գետն է հոսում բարձրից դէպի ցած, որ գարնանը լեռներում կուտակուած ձիւնի հալուելու պատճառով սկսում է սաստիկ յորդանալ և իւր ափերից դուրս գալով՝ ահագին վնասներ է հասցնում Նուխու այգիներին և պարտէզներին։

Բ. ՃԱԼԷԹԻ ՎԱՆՔԸ։ Ճալէթ Հայաբնակ գիւղից վերև մի բարձր լեռնահարթի վրայ շինուած են ս. Աստուածածնի անունով հին և նոր վանքերը, որոնցից առաջինը շինուած է շատ հին ժամանակներում, իսկ վերջինը 19-րդ դարի կիսում։ Հին վանքը շինուած է նոյն իսկ ս. Եղիշէ

առաքեալի ձեռքով, ուր կարգած է եղել վերատեսուչ հովիներ, որ հետզհետէ ծաղկում, եպիսկոպոսարան և ապա Աղուանից աշխարհի կաթողիկոսարան է դառնում մի ժամանակ *), ինչպէս այդ պարզ երևում է վանքիս մուտքի առաջ թաղուած կաթողիկոսների շիրիմների վրայ ձգուած տապանաքարերի արձանագրութիւններից։ Աւանդաբար պատմում են, որ ս. Եղիշէ առաքեալն ունեցել է երեք աշակերտներ,—Վլաս, Քահալցիցիկ և Գօմ-Մուրատ **)։ Որոնցից առաջինը նահատակուած և թաղուած է Նիժ գիւղաքաղաքի ս. Եղիշէի եկեղեցու սեղանի տակը, երկրորդը նահատակուել ու թաղուել է Վարդաշէն գիւղաքաղաքի ստորոտում, մի գեղեցիկ բլրակի վրայ, որ յետոյ Վարդաշէնցի բարեպաշտ Առաքել Մուրատեանը իւր ծախքով շինում է մի փոքրիկ մատուռ 1811 թ. որ Գեր. Մ. եպ. Բարխուդարեան սրբազանի տեսլով, այժմս քայքայուած վիճակի մէջ է ***)։ Իսկ երրորդը նահատակուած ու թաղուած է մի բարձր լեռան գլխին, որ գտնուում է Ծերիկ գիւղի հիւսիսային արևմտեան կողմը։ Ս. Եղիշէ առաքեալին անօրէն լեռնականները նահատակել և ձգել են մահապարտների համար յատկացուած այն հորի մէջ, որ այժմս գտնուում է Հայից թը-

*) Տես, «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 377 և «Աղուանից երկիր» երես 249—250։

**) Տես, «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 380 և «Աղուանից երկիր» երես 217։

***) «Աղուանից երկիր» երես 248։

քացած Բում գիւղի հիւսիսային կողմը թեքուած Կովկասեան լեռնաշղթայի վրայ։ Յետոյ Աղուանից աշխարհի Վաչագան բարեպաշտ թագաւորը հանել է տալիս ս. Եղիշէի մասունքները և տեղափոխելով Արցախ, թաղել տալուց յետոյ, նրա շիրմի վրայ շինում է մի վանք ս. Եղիշէի անունով *)։ Ուտիացոց երկրի զանազան մասերում թէև կան մի քանի վանքեր ու սրբավայրեր, բայց ամենից շատ յարգուածներն ու սիրուածները սրանք են, որոնց ուխտագնացութեան օրերը լինում են Զատկից յետոյ—Յինանց օրերում, երբ Ուտիացոց երկրի ամեն ծայրերից խուռն բազմութեամբ ուխտ են գնում՝ թէ իսկական Հայ քրիստոնեաները և՛ թէ Հայից թրքացած մահմեդականները։ Կեանքիս մէջ ես շատ եմ տեսել թէ նշանաւոր վանքեր և թէ բազմաթիւ ուխտագնացութիւններ, բայց նրանցից և ոչ մէկը չէ կարող համեմատուել Ուտիացոց երկրի ուխտագնացութեան հետ։ Վասնզի ընդհանրապէս Թիֆլիզի և մասնաւորապէս Արարատեան աշխարհի ուխտագնացութեան սրբավայրերում շատ անգամ տեղի են ունենում տգեղ միջնադէպեր—արբեցողութիւն, կռիւ և իրար քիթ ու պռունգ ջարդել։ Այն ինչ՝ Ուտիացոց աշխարհի սրբավայրերում, ուխտագնացութեան միջոցին, սէր և խաղաղութիւն է թագաւորում, ամենքը ջերմ հաւատով, խորին պատկառանքով և երկիւղածու-

*) Տես «Աղուանից երկիր», երես 256։

թեամբ են վերաբերում ուխտագնացութեան վրայ։ Ուտիացոց երկրի ուխտագնացութիւնը լինում է այսպէս։ Առաւօտեան արշալոյսը բացուելուն պէս, ամենքը, արք և կանայք, ծերերն ու երեխաները լուացւում, մաքրւում, սանրւում և ոտնաման նոր շորեր են հագնում։ Առողջները՝ ոտքով, թոյլերն ու փոքր երեխաները գոմէշի սայլերով, իսկ գիւղացի կարիճ երիտասարդները նժոյգ ձի նստած, ուրախ-ուրախ երգելով և զբուցելով, շարան-շարան, մեծ երկիւղածութեամբ և ջերմ հաւատով դիմում են դէպի ուխտատեղ։ Հարուստները տանում են իրենց հետ ժառանգու մի-մի շիշակ գառ, իսկ աղքատները աքաղաղ. Հարկաւ, խունկ ու մոմի հետ վերցնում են իրենց հետ նաև ուտելիքի և խմելիքի ամեն տեսակ առատ պաշար—տապակած ու խաշած հաւ, կարմիր ներկած ձու, գաթայ, հալվայ, գինի, օղի և այլն և այլն։ Ս. պատարագից յետոյ, ժողովուրդը խիստ երկիւղածութեամբ և խորին պատկառանքով համբուրում է եկեղեցու մասունքները և կամ սրբավայրերի անշուք խաչքարերը, որից յետոյ կարծէք նա թէ նոր հոգի և նոր կեանք է ստանում։ Ապա իւրաքանչիւր գիւղի համայնք, շար ի շար, իրար կողքէ-կողք նստում են ծալապատիկ միմեանց դիմաց, կանաչ արօտների վրայ, նորաբողբոջ ծառերի ստուերների տակ։ Մէջտեղից բացւում են երկար ու նեղ գունաւոր սփռոցները, որոնց վրայ դարսում են իրենց ուտելիքի ու խմելիքի պաշարները, քահ. կանգնում է ոտքի վրայ և «Հայր մեր»-ով օրհնում է սեղանը։ Այս-

պիսով տեղի է ունենում հասարակաց ճաշկերոյթը. ուտում, խմում են ուրախ և իրենց սիրելիների կենացը կոնծում։ Ճաշկերոյթի միջոցին սիրելի խնամիներն իրար յարգում են ու մեծարում՝ պէսպէս ուտելիքների և խմելիքների անուշահամ նմուշներով։ Ո՛վ որ նշանած հարս ունի, տղայի հայրը իւր հարսնացուի ծնողներին է յարգում՝ պէսպէս ուտելիքներով լիքը սկուտեղ *) ուղարկելով, իսկ հարսնացուի ծնողներն էլ իրենց խնամուն են յարգում ու մեծարում՝ իրենց սեղանի վրայի գտնուած նոյնպիսի բարիքներով։ Ուրախ ճաշկերոյթի ժամանակ յանկարծ հրացանի պայթիւն է լսւում, որին հետևում է երկրորդը, երրորդը... Տեսնում էք, որ գիւղական նոր պըսակուած երիտասարդներն ու նշանուած պատանիները՝ հէնց նստած տեղից նշան են գնում հաստաբուն կաղնու ամենաբարձր ճիւղին և ամենքը իրենց հրացանի փողն ուղղում են դէպի այդ ճիւղը։ Ոմանց գնդակը վրիպում է, սմանցը միայն նորածիլ ոստերն է թոցնում, ոմանցը՝ միայն կեղևն է խաղում ու անցնում, իսկ ոմանցը ուղիղ ճիւղին է դիպչում և մատաղահաս տերևներով ճիւղն օրօրուելով օդի մէջ, ընկնում է վայր, նոյն իսկ հացկերոյթի սփռոցի վրայ։ Այսպիսի քաջ և վարժ հրացանաձիգ երիտասարդներին ամեն կողմից ուխտաւորները ցնծագին աղաղակներով գովում ու փառաբանում են և գի-

*) Այսպիսի սկուտեղին տեղացիք ասում են խօնչայ։

նու լի բաժակներ են պարպում նրանց թանկագին կենաց։ Ճաշկերոյթից յետոյ բոլոր ձիաւորները ձիարշաւի հանդէս են կատարում հետևեալ կերպով։ Նախ և առաջ տափարակ դաշտի երկարութեամբ որոշում են տարածութեան մի սահման, օրինակի համար՝ մինչև գիմացի այս ինչ կամ այն ինչ ծառը։ Յետոյ բոլոր ձիաւորները իրար կողքէ-կողք շարւում են որոշուած գծի ուղղութեամբ, երեսները դէպի նշան դրած հեռաւոր ծառն ուղղած։ Նախ՝ հերթով քշում են զոյգ-զոյգ մինչև նշանակուած տեղը և այնտեղից էլ սուրալով՝ կրկին վերադառնում են իրանց կանգնած տեղը։ Այս արշաւանքի ժամանակ ձիարշաւ երիտասարդները իրենց հնարագիտութիւնն ու ճարպիկութիւնը մեծ խնամքով աշխատում են հրապարակ հանել։ Եւ ամեն մէկը մեծ ճիգ է թափում, որ թէ ինքը և թէ իւր ձին բոլոր ուխտաւորների հիացման ու գովասանութեան առարկայ լինի։ Ձիարշաւների պահուն ով որ հրացան է խաղացնում իւր ձեռքին, մերթ գաւակի վրայից երեսը դէպի յետ դարձրած, կամ աջ ու ձախ կողմը կռանալով, արագավազ ձիու փորի տակից և կամ ձիու վրայ երեսն ի վեր պառկած հրացան է պայթեցնում և իւր ընկերից առաջ է անցնում, ամենքի հիացման և բուռն ցոյցերի առարկան նա է դառնում։ Այս կարգով ամենքը թէ իրենց և թէ իրենց արագավազ ձիերի շնորհքը ցոյց տալուց յետոյ բոլորը միասին միանգամից՝ նշան տարուն պէս, սլանում են դէպի առաջ ու յետ։ Որի ձին ամենից առաջ է անցնում, այդպիսի նժոյգի ար-

ժէքը սովորականից շատ թանգ է գնահատւում և նրա գովասանութիւնն ու հռչակը տարածւում է ամբողջ գաւառի չորս կողմը։ Ձիարշաւի խաղերից յետոյ ամենքը ուրախ տպաւորութեան տակ ցրւում են իրենց տները։

Գ. Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔԸ։ Ս. Գէորգի վանքը գտնւում է Հայից թրքացած Պոէզ (Պարտէզ) գիւղից դէպի հարաւային կողմը նայող լեռան ստորոտին։

Դ. Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔԸ։ Ս. Գեղարդի վանքը գտնւում է ս. Գէորգի հիւսիս-արևմտեան կողմը մի սարի գլխին, որին թրքացած Հայերը անուանում են Դամիւրով։ Թէ այս և թէ վերոյիշեալ վանքերն ու սրբավայրերը առհասարակ ուխտ-են գնում, երկիւղածութեամբ և խորին պատկառանքով յարգում ու պատւում են թէ քրիստոնեայ և թէ թրքացած Հայերը։ Բայց եթէ մենք Հայերս ձեռնհաս թեմական Առաջնորդներ, շրջիկ քարոզիչ վարդապետներ և բանիմաց քահանաներ ունենայինք, այդ դժբախտ թրքացած բազմաթիւ Հայերը կրկին Հայ քրիստոնեայ դարձած կլինէին։

Ժ

ՈՒՏԻԱՑՈՑ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՀՆԱՒԱՆԴ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուտիացոց աշխարհի թրքախօս և Ուտիա-

խօս Հայերի մէջ պահպանուել են մինչև ցարդ հետևեալ հնաւանդ սքանչելի սովորութիւնները։ Նախ՝ այդ հնաւանդ սովորութիւններով նրանք ցոյց են տալիս հաւասարութեան և միութեան գեղեցիկ օրինակը նոյն իսկ զատկական ամենամեծ տօնի օրը՝ հացկերոյթի ժամանակ։ Իսկ եղբայրաբար միմեանց օգնելու և աջակցելու եղբայրսիրութեան հրաշալի օրինակը նրանք ցոյց են տալիս այն ժամանակ, երբոր իրենց եղբայրակիցները՝ նեղութեան կամ դժբախտութեան մէջ ընկած, ուրիշի օգնութեան ու կարեկցութեան կարօտ են լինում։ Ահա թէ ինչպէս։ Ուտիացոց աշխարհի հարուստ ու աղքատ Հայ ընտանիքները անշուշտ պիտի գնեն իրենց համար մի-մի հատ անարատ ու ընտիր գառը՝ Զատկի օրը ախառ (մատաղ) անելու համար։ Առաւօտեան արշալոյսը դեռ չբացուած, Զատկի օրը, մորթում են բոլոր գառները և փորոտիքները մի լաւ մաքրելուց յետոյ ամբողջապէս խորովում են նրանց և դնում մի մեծ սկուտեղի *) վրայ։ Խօնչայի մէջ, պղնձէ ափսէներով շարում են կարմիր ներկած ձուաներ, նազուք, գաթայ, դեղին խունկի պէս անուշահոտ հացեր, կարագ իւղ, գոմէշի թանձր սեր, քամած մածուն, տապակած հաւեր և հողէ մի մեծ ամանով լիքը կարմիր գինի և այս ամենի վրայից ծածկում են մաքուր սփռոցով և ապա ուղարկում են գիւղական եկեղեցու բակը։ Այստեղ նախապէս ընտրուած մարդիկ են լինում, որոնք իւրաքանչիւր տանից ուղարկուած խօնչան ստանում և հաւաքում են մի տեղ։ Ս. պատարագից յետոյ, եկեղեցու բակում, կանաչ ու դալար խոտերի վրայ փռում են երկար ու նեղ սփռոցներ։ Սփռոցների երկարութեամբ, իրար դէմ ու դէմը ծալապատիկ նստում են՝ տղամարդկանց խումբն առանձին, իսկ կանանցն առանձին։ Քահանան օրհնում է սեղանը և բազմում է իրեն յատկացուած՝ ամենաբարձր ու պատուաւոր տեղը, իսկ ժողովուրդը նստում է՝ ով որտեղ պատահում է։ Ճաշկերոյթի կառավարիչները առանց ընտրելու, անխտիր բերում են իրենց ձեռքն ընկած սկուտեղները և դնում են ամեն մի ընտանիքի աւագագոյն անդամի առաջ՝ մի-մի հատ։ Բանալով սկուտեղները, սկսում են ճաշել ուրախ-ուրախ և իրենց սիրելիների կենաց գինու բաժակներ պարպել։ Այս հասարակական համայնական ճաշկերոյթի ժամանակ՝ էլ «իմը», «քոնը» հարցնել չկայ, ում առաջը իւր բախտից ինչպիսի կերակուր ու գինի պատահի, սուս ու փուս նա պիտի ուտէ ու խմէ, գոհ սրտանց և ուրախ դէմքով։ Շատ անգամ աղքատի նիհար գառն ու չոր հացերը և քացախած գինին դնում են հարուստների և պատուաւոր մարդկանց առաջ, իսկ հարուստների ճոխ, լիքն ու բարի սկուտեղը բացւում է օրական հացի կարօտ ու ամենաթշուառ աղքատի առաջ։ Այսօրուայ պէս ես լաւ յիշում եմ հետևեալ դէպքը, որ իմ կեանքումս չեմ մոռացել և երբէք էլ չեմ մոռանայ։

Երբոր ես 7—8 տարեկան էի, ինձ համար մի սև և անմոռանալի Զատիկ բացուեց։ Այդ օրը

*) Տեղացի՝ թէ հայ և թէ թուրք անուանում են խօնչայ։

հօրս առաջ դրուած էր մի աղքատիկ խօնչայ (բա-
կուտեղ), որ ուրախ-ուրախ բացեց և դուրս բե-
րեց նրա միջից մի նիհար ու փոքրիկ գառը, մի
երկու սև ու չոր հացեր և մի ամանով էլ քացախ
գինի։ Հայրս ուրախ ու զուարթ կտրատեց իւր
ձեռքով և տուեց իւր ընտանիքի բոլոր անդամ-
ներին, որոնք երեսներին խաչակնքելով՝ սկսեցին
ուտել, բացի ինձանից։ Խռովել էի ես և չէի կա-
մենում մի բան ուտել, առարկելով հօրս ական-
ջին, թէ «մեր տանու պատրաստած լաւ-լաւ բա-
ներից կտաս՝ կուտեմ, ապա թէ ոչ՝ այս սև չոր
հացից ու մսից չեմ ուտի»։ Հայրս ծուռ-ծուռ նա-
յեց ինձ վրայ իւր սևորակ ու կրակոտ աչքերով
և ականջս մի լաւ ոլորելով՝ գլխով նշան տը-
ւեց, որ իսկոյն հեռանամ և գնամ մօտս և ես
արտասուք կուլ տալով գնացի իմ մօրս մօտ...
Ահա զատկական այս արտակարգ սովորութիւնը
և հասարակական այսպիսի հացկերոյթը մեզ տա-
նում ու Առաքեալների ժամանակն է հասցնում,
նրանց միաբանական ճաշկերոյթներն է յիշե-
ցնում. երբ ամեն բան հասարակաց էր, երբ ա-
մենքը միասին էին ուտում ու խմում՝ «ի բեկա-
նել հացին ի սեղանոյ անտի»... Ուտիացոց աշ-
խարհում, երբոր մէկը իւր սեփական ոյժերով
անկարող է լինում տուն շինել, կամ իւր արտե-
րը ցանել, կամ ցանած և հասունացած հացահա-
հատիկները հնձել իւր ժամանակին, այսպիսի ան-
օգնական գիւղացին իսկոյն դիմում է իւր գիւ-
ղի համայնքի օգնութեան։ Նա իւրաքանչիւր տա-
նից մի-մի մարդ կանչում է «իմեաջի»—հաւա-

քական օգնութիւն, որ նշանակում է եղբայրա-
կան փոխադարձ օգնութիւն։ Հրաւիրուած գիւ-
ղացիք ամենայն սիրով և պատրաստականու-
թեամբ գալիս են իրենց բահ ու բրիչներով, ի-
րենց ուրագ ու կացիններով և խմբովին աշխա-
տելով, մի երկու օրուա, նոր տուն են շինում և
ապա գոհ սրտով գնում են իրենց տները։ Այս
հաւաքական օգնութիւնը և եղբայրական փոխա-
դարձ աջակցութիւնը գիւղացիք անտրտունջ կա-
տարում են այն մարդկանց համար, որոնք իս-
կապէս օգնութեան և աջակցութեան կարօտ են՝
թէ վարուցանքի, թէ հնձի և թէ ուրիշ ծանր
աշխատանքների ժամանակ։ Հարկաւ «իմեաջի»—
հաւաքական օգնութիւն հասնող գիւղացիների ու-
տելն ու խմելը հոգում է հրաւիրող և եղբայրա-
կան օգնութիւն խնդրող գիւղացին։ Ահաւասիկ ձեզ
ճշմարիտ քրիստոնէութեան վայել ընկերսիրութեան
և փոխադարձ հաւաքական օգնութեան սքանչելի
մի սովորութիւն, որ իբրև մի ընտիր օրինակ և
գեղեցիկ կաղապար կարող է լինել մեր բոլոր Հայ
գիւղացիների համար։ Միայն ցաւ ի սիրտ պիտի
ասեմ՝ ափսոս և հազար ափսոս, որ այսպիսի ըն-
տիր յատկութիւններով օժտուած և երկրագոր-
ծութեան սիրահար մի բուռն Հայ ժողովուրդը
խարխափում է անսահման տգիտութեան և թան-
ձրը խաւարի մէջ։ Գոնէ այսուհետև շատ ու շատ
ցանկալի է, որ մեր բանասէրներն ու հնագէտ-
ները, մեր բանիմացներն ու գրագէտները շրջէին
Ուտիացոց աշխարհում, ուսումնասիրելով՝ հետա-
զօտէին նրանց անցեալն ու ներկան և ապա այս

երկաթակազմ ժողովրդին ծանօթացնէին Հայ ընթերցողների և լուսաւոր աշխարհի հետ։

Ի

ՈՒՏԻԱՑՈՑ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ

Ուտիացոց աշխարհի ցած և տափարակ մասերում, ուր օդն ու ջուրը առհասարակ շատ վատ է, այնտեղերի ժողովրդի միջից անպակաս է տենդն ու դողը։ Այս մահաբեր չարիքից ազատուելու համար տենդոտ հիւանդին յանկարծ պինդ ապտակ են տալիս, կամ նրա վզի յետևի կողմից՝ ողնաշարի ուղղութեամբ պաղ ջուր են լցնում, որ սաստիկ վախից տենդն՝ անյայտանայ։ Կամ մի որևէ նահատակի գերեզմանի մօտ բղխող սառնորակ աղբիւրի ջրով լուանում են հիւանդի երեսը, ձեռքերն ու ոտքերը և ապա նրա հագուստից մի կտոր պատռում և կապում են աղբիւրի մօտ բուսած ծառի կամ թփի ճիւղերից և անպայման հաւատացած են, որ այսպիսով իրենց հիւանդը բոլորովին կառողջանայ առ միշտ։ Այս իսկ պատճառով անծանօթ այցելուն տեղ-տեղ կտեսնի սառնորակ աղբիւրների մօտ այնպիսի ծառեր կամ թփեր, որոնց ճիւղերից կապկպած ու կախուած են լինում գոյնզգոյն ցնցոտիների անթիւ ու անհամար կտորներ։ Եթէ մէկը յանկարծ հիւանդանում է, իսկոյն ենթադրում

են, որ դա «չար» աչքից է։ Եւ ահա տարաբախտ հիւանդին չար աչքից փրկելու համար վերցնում են բուռով աղ և հիւանդի գլխի շուրջը մի քանի անգամ պտացնելուց յետոյ՝ նետում են կրակի մէջ ասելով. «չար աչքը թող այսպէս տրաքտըրաքուի»։ Իսկոյն բոցերի միջից լսւում է ճըրթ-ճըրթոց և այդ տրաքտրաքոցի ճայթումներից ա-կանատեսները որոշում են չար աչքի սաստիկ կամ թոյլ ներգործութեան չափն ու սահմանը։ Այսպիսի դէպքերում հաւատով և ջերմեռանդ կանայք հիւանդի գլխի չորս կողմը շրջեցնում են մի զոյգ դեղին մեղրամոմ և ապա վառում են՝ ս. Եղիշէ առաքեալի արագահաս օգնութիւնն ու զօրութիւնը հայցելով և կամ խոստանում են իրենց ունեցած անասուններից մէկը նուիրել իրենց աղքատ հարևանին։ Բարեբախտաբար երբոր հիւանդն առողջանում է, նրա ծնողները իսկոյն կատարում են իրենց խոստումը՝ կենդանի մի հորթ կամ կով ընծայելով իրենց աղքատ դրացուն։ Եթէ գիւղացու կթան կովը կամ գոմէշը և կամ մի որևէ անասուն մեռնում է անտառում և կամ կորչում է, այն ատեն զրպանի ծալովի դանակը ծալում և ձգում են աղով լի տոպրակի մէջ, որպէսզի վայրենի գայլերի ու գազանների բերանները կապուին և չկարողանան մօտենալ իրենց անասունին։ Երբոր անասունը գտնւում է, նրանք հաւատում են, որ բերանի վրայ ծալուող դանակն է ազատել իրենց խեղճ անասունին չար գազանների պատառատող ժանիքներից։ Կատաղած շուն կամ որևէ գազան երբոր խածում և վիրաւորում

է մարդկանց, նրանց վէրքերի վրայ դնում են ծաված հում լոբի։ Բայց եթէ կատաղած գազանին կարողանում են սպանել, իսկոյն կէսում են նրա մարմնի մէջտեղից և խածուած հիւանդին անց են կացնում երկու մաս արուած դիակի կըտորների մէջից և կատաղած գազանի մազերից խուզում, խանձում և դնում են վէրքերի վրայ և այսպիսով հաւատում են, որ իրենց հիւանդները կըժշկուեն։ Իսկ ոմանք էլ տանում են ուխտ «Սարի-փիր»—դեղին սուրբ ասուած տեղը, որ գտնուում է Միրզաբէկլու Թրքախօս Հայաղաւան գիւղի հարաւային կողմը մի խիտ անտառի մէջ, ուր կան երկու տապանաքարեր՝ արաբական լեզուի արձանագրութեամբ։ Այս տեղ են տանում նաև այնպիսի մարդկանց, որոնք դեղնութիւն ունեն և կամ ջրդողութեամբ փորերը ուռած են։ Փորերը քսել են տալիս տապանաքարերին, որպէս զի նրանց երեսի դեղնութիւնն ու փորի ուռոյցքները անցնեն — անհետանան ընդ միշտ։ Եթէ մէկի տան բակում շունն սկսի անսովոր կերպով ոռնալ ծոր տալով, լսողների վրայ մի սարսափելի սարսռոց է ձգում և ժողովրդի կարծիքով մի սարսափելի դժբախտութեան նշան է համարուում։ Հէնց այս իսկ պատճառով էլ ամեն կողմից կսկսեն պոռալ, որ շունը ոռնալուց դադարի։ Բայց եթէ չդադարէ, շան տէրը իսկոյն նրան գնդակահար կանէ, որպէսզի մի որևէ դժբախտութիւն չպատահի իրենց, կամ հարևանների տան մէջ։ Եթէ ագռաւը գայ և տան մօտ ծառի վրայ թառած սկսէ «ղռա—ղռա»

ձայն արձակել, դա նմանապէս շատ վատ և չարագուշակ նշան է և հաւատում են, որ մի անբախտ լուր պիտի լսեն մօտ օրերում։ Անձրևից յետոյ երկնքի վրայ երբոր կարմիր ու կանաչ ծիածան է երևում, ժողովուրդը հաւատում է, որ ամեն բերքերի մէջ մեծ առատութիւն պիտի լինի։ Ժողովրդի կարծիքով, կանաչ գոյնը՝ ցորենն ու հացահատիկներն են, իսկ կարմիրը՝ մետաքսն ու գինին։ Կան այլ և այլ շատ հաւատալիքներ և նախապաշարմունքներ, որոնց մասին մի առ մի պիտի խօսեմ Ուտիացոց մասին գրելիք ընդարձակ մի այլ աշխատութեանս մէջ։

Լ

ԿՈՒԳԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԵՐԻ ԵՒ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԷՋ

Մինչև ցարդ Հայերն ու տեղական մահմեդականները երդւում են Արևի անունով. իսկ առաջինները նրա առաւօտեան ծագման ժամանակ սկսում են մինչև անգամ երկիւղածութեամբ խաչակնքել իրենց երեսներին։ Նմանապէս երդւում են սովորական կրակի անունով և նրա մէջ կեղտոտ բան ձգելը կամ թքելը շատ ծանր մեղք ու անները լելի յանցանք են համարում՝ թէ հայերը և թէ թուրքերը։ Ընդհանրապէս սրբավայրերում և մասնաւորապէս գերեզմանոցներում բուսած հինաւուրց ու հաստարմատ ծառերին վերաբերուում

են խորին յարգանքով և նրանցից որևէ ոտ կամ ճիւղ կտրելը շատ ծանր մեղք են համարում։ Իրենց համար։ Ինձ այնպէս է թւում, որ Ուտիացոց աշխարհի այժմեան ազգաբնակութեան նախնիքները՝ իբրև Աստուած պաշտելիս են եղել ի միջի այլոց՝ նաև հաստարմատ և դարաւոր ծառերը։ Տողերիս գրողի հայրական այգում կայ շատ հին դարերից բուսած շագանակի մի ահագին ծառ, որի հաստութիւնը երեք տղամարդի գրկաչափից աւելի է։ Աւանդաբար պատմում են, որ այդ հսկայ ծառի բուսած տեղում անհաւատ լեռնականները չարչարել են ս. Եղիշէ Առաքելի աշակերտներից մէկին, ուր՝ միևնոյն տեղում, իբրև նշան տնկել են շագանակի մի ծառ, որի առատ պտուղներից մի հատ քաղել ոչ ոք չի համարձակւում, վասնզի նրան սուրբ և անձեռնմխելի է համարում տեղական ժողովուրդը։ Այդ հսկայ ծառի տակը երբեմն ուխտ էին գալիս իմ մանկութեանս տեն, խունկ ու մոմ էին վառում և մատաղ էին անում։ Մինչև յարդ այդ վիթխարի ծառի ահագին քանակութեամբ պտուղները ագռաւներն ու կաչաղակներն են ուտում։ Անծանօթ այցելուն, այս ու այն հայոց և թրքաբնակ գիւղերի մօտ, եթէ թաւոտ ու հաստարմատ անտառակներ տեսնի, անկասկած պիտի իմանայ, որ դրանք գիւղական գերեզմանատներն է, որոնց գեղեցիկ ծառերը սուրբ են համարւում ժողովրդի աչքում։ Նիժ գիւղի հիւսիսային կողմը, Նուխու ճանապարհի վրայ, հսկայ ծառերով պատած մի խիտ անտառ կայ, որ հին հեթանոսական դարերում Ուտիացոց աշխարհի կռատունը է եղել *)։ Յետոյ, առաջին դարի սկզբում, ս. Եղիշէ առաքեալը կործանել է այդտեղի միհեաններն ու կռատունները և նրանց տեղը կանգնեցրել է խաչ քարեր, որ մինչև յարդ հայերի և թուրքերի համար շատ մեծ ուխտատեղի է համարւում և այդ տեղը այժմս կոչւում է «Թավուխ կլրան»—որ նշանակում է հաւեղէնների զենարան՝ մատաղ մորթելու տեղ։ Տեղական ժողովուրդը շատ մեծ յարգանքով և խորին պատկառանքով է վերաբերւում դէպի այդ սրբավայրի հսկայ ծառերը և ոչ ոք չէ համարձակւում մի որևէ ճիւղ կտրել նրանցից։ Անհաւասիկ ձեզ հնագիտական ուսումնասիրութեան համար առատ ու ընտիր նիւթեր։

Խ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔԵՐ ՈՒՏԻԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

Ինչպէս ասացի, ամբողջ Ուտիացոց աշխարհի բազմաթիւ գիւղերի մէջ մինչև յարդ գործածական և անկորուստ է մնացել Ուտիերէն լեզուն միմիայն Վարդաշէն և Նիժ գիւղաքաղաքներում, որոնց բառերի և խօսակցութեան ոճի մէջ մի փոքր տարբերութիւն կայ։ Հայ և օտար մասնագէտ լեզուաբան և պատմաբան բանասէրների

*) Տես «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 381.

հետաքրքրութեան փոքր ինչ գոհացումն տալու համար՝ իրրև նմոյշ առաջ եմ բերում Նիժ գիւղաքաղաքի գործածական խօսքերից Ուտիերէն հետևեալ բառերը.

1. Կօժ—տուն։
2. Քիւլֆաթ—ընտանիք։
3. Էշղար—տղամարդ
4. Խուեար—աղջիկ։
5. Զըուրխ—կին։
6. Ղար—տղայ։
7. Վիչի—եղբայր։
8. Խունչի—քոյր։
9. Բաւա—հայր։
10. Նեանա—մայր։
11. Խօրայ—կերակուր։
12. Նուղուլ— կերակրի բոլոր տեսակը։
13. Սաբայնան — առաւօտ։
14. Բիասի—երեկոյ։
15. Բեղ—արև։
16. Խաշ—լուսին։
17. Գեօյ—երկինք։
18. Օչալ—երկիր։
19. Ասսա—ամպ։
20. Ճօճա—կարմիր։
21. Մային—սև։
22. Դեօյին—կապոյտ։
23. Մածի—սպիտակ։
24. Նեղու—դեղին։
25. Մուճա—քաղցր։
26. Աղու—դառը։
27. Ախշումսուն—ծիծաղել—խնդալ։
28. Իոնէ—լաց։
29. Մուխբակսուն—ուրախանալ։
30. Բէյքէֆ—տխուր։
31. Իշէ—գիշեր։
32. Բայինդ—մութ։
33. Շինէեարի կամ խիշնա—կէս գիշեր։
34. Քեայքեայմուխ—արշալոյս։
35. Օտտաղ—արօր։
36. Կօրուղ—դաշտ։
37. Էղ—վարուցանք։
38. Մանդակբակսուն—յոգնել։
39. Տիղա—վազել։
40. Բուխաժուղ— Աստուած։
41. Յիսուս—Յիսուս։
42. Քրիստոս— Քրիստոս։

43. Իքիրամբսուն—պաշտել։
44. Զուրէսուն—սիրել
45. Փիսլամիշփսուն—ատել։
46. Դաւաբսուն—կըռուել։
47. Խօխվիբսուն — ջարդել։
48. Խուրիբսուն — մանրել։
49. Խուրի—մանր։
50. Խուրիթուլ—ժըրջիւն։
51. Տատ—ճանճ։
52. Ուճ—մեղր։
53. Ուճէտատ—մեղու։
54. Կուշ—թռչուն։
55. Գիեար—աղաւնի։
56. Կունկուրի—տատրակ։
57. Ղէյնա—ագռաւ։
58. Կիրծալ — կաչաղակ։
59. Կօկօծ—հաւ։
60. Դաղալ—աքաղաղ։
61. Շումակ—ձուածող հաւ։
62. Ամդար—մարդ։
63. Էգ—ձի։
64. Զուբ—կով։
65. Էղել—ոչխար։
66. Քեալ—գոմէշ։
67. Եօղսուլ —տնանկ, աղքատ։
68. Ուս—եզ։
69. Բեօկ—խոզ։
70. Ջիւհար—եղնիկ։
71. Մուկալա—եղջերու։
72. Ուլ—գայլ։
73. Թիւլքի— աղուէս։
74. Արամտոր—չաղալ
75. Խէա—շուն։
76. Խէ—ջուր։
77. Խեախեարսուն—կոտրել։
78. Բափա—թափել։
79. Քալարաքսուն — մեծանալ։
80. Միծիկ—փոքր։
81. Միծիկբակսուն — փոքրանալ։
82. Մօքալան—մեծ։
83. Ար—տանձ։
84. Էշ—խնձոր։
85. Կաճուլի—վարունգ
86. Ղոզ—սալոր։
87. Տամպուլ —աղնիւ սալոր։

88. Մային բայի—սև կեռաս։
89. Մածի բայի—ճերմակ կեռաս։
90. Գիւլբայի— ալուբալի (վիշնա)։
91. Արիք—ծիրան։
92. Շեաֆտալուկ — դեղձ։
93. Ալաժ—նուռ։
94. Ինջիլ—թուզ։
95. Տուլ—խաղող։
96. Կարփուզ— ձմերուկ։
97. Եմիշ—սեխ։
98. Մուճանակ—կաթ։
99. Ուխայիլ—մածուն։
100. Նակ—թան։
101. Զուամի—պանիր։
102. Մողի—հոլթ։
103. Աչառ—առակ։
104. Տօլ—կաշի։
105. Թաքի—գնայ։
106. Հեթմը—ինչպէս։
107. Մուզուն—լեզու։
108. Բէշ—մեր։
109. Ուփանու — գիտեմ։
110. Բշտօն—Հայ։

Ծ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԹՈՒՐՔԵՐԸ ՈՒՏԻԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ամենքին քաջ յայտնի է, որ Մահմէդն ու իր յաջորդները և նրանց հետևողները դարերի ընթացքում՝ սկզբից մինչև ցարդ Մահմէդի դաւանած վարդապետութիւնը տարածել են սրով և կրակով։ Մահմէդի բազմաթիւ հետևողների միակ և գլխաւոր տենչանքն է եղել կոտորել քրիստոնեաներին և նրանց գոյքերին ու հարստութեանց

տէր դառնալ։ Կամ նրանց տաճարներն ու սրբավայրերը հիմնայատակ քարուքանդ անելուց յետոյ, սոսկալի տանջանքներ տալով մահմեդական կրօնն ընդունել տալ և ապա մարդկանց ու տեղագրական անուններն այն աստիճան փոփոխել և թրքացնել, որ քրիստոնէութեան հետքն անգամ չմնար աշխարհիս վրայ։ Ի զուր չէ ասուած, թէ «որ և է մահմեդականի ձիու սմբակով ոտք կոխած տեղը այլևս երբէք խոտ չի բուսնի»։ Ահա այսպէս, Մահմեդական կրօնին հետևող լեռնականների ժողովանդ և արիւնարբու զաւակները քարուքանդ արին Ուտիացոց և Աղուանից երկրները։

Ինչպէս ասացի, Հայ քրիստոնեայ բնակչութեան մի մասը բնաջինջ արին — կոտորեցին անխնայաբար, մի մասը սոսկալի տանջանքների ենթարկելով, բռնութեամբ դարձրին մահմեդական, իսկ միւս ամենամեծ մասը գերի տարան և քշեցին Պարսկաստանի խորքերը։ Աւանդաբար ծերունիները պատմում են, որ դարերի ընթացքում Աղուանից և Ուտիացոց երկրներից տարուած անթիւ ու անհամար հայ քրիստոնեաներից սերուելով և հետզհետէ աճելով ու բազմանալով են գոյացել այժմեան Աղուանիստանն ու Բելուջիստանը։ Այս բանը հաւանական է թւում հէնց այն բանից, որ այդ երկու երկրների անուններից Հայերէն լեզուի հոտ է բուրում։—Աւղանստան, որ նշանակում է Աւղանների բնակուած տուն, իսկ Բել-Ուտիստան՝ աղաւաղուել և մահմեդականների բերանում փոփոխուելով՝ դարձել

է Բելուջիստան։ Իմ ասածներս միայն անձնական ենթադրութիւն է, որ տակաւին կարօտ է հմուտ բանասէրների ու յայտնի հնագէտ-պատմաբանների մանրազննին հետազօտութեան և լուսաբանութեան։ Սակայն և այնպէս, ի նկատի առնելով մահմեդականների այն ընորոշ յատկութիւնը, որ մի որևէ երկիր տիրելուն պէս բռնի միջոցներով՝ կամենում են տիրապետող հանդիսանալ, ոչ միայն նրանք իրենց լեզուն, բարքերը, սովորութիւնները և նիստ ու կացը մտցնում են իրենց ստորադրեալ ազգերի մէջ, այլև պատմական տեղերի, լեռների ու գետերի անունները մինչև անգամ փոփոխում-աղաւաղում են և կամ կնքում են բոլորովին մահմեդական անուններով։ Օրինակի համար՝ Արաքս կամ Երասխ գետին— Արազ, Ախուրեան գետին՝ Արփայ չայ, Եփրատ գետին՝ Մուրատ չայ, Արագած լեռան՝ Ալագեազ, Սև-լեռան՝ Կարա-դաղ, Լամ Երզնկայ քաղաքին՝ Իրիզայ, Ակն՝ Էկին, Սեբաստիա՝ Թոխաթ և այլն և այլն։ Զալաբի անունով մի կրօնամոլ հրէշ միանում է տեղական պարսիկների և լեռնցի լեգզիների հետ,—մօտաւորապէս 1751 թ. և Ուտիացոց աշխարհի Հայ քրիստոնեաների գլխին չար պատիժ ու կատարեալ պատուհաս է հանդիսանում։ Մինչև մեր օրերը ծերունիները զարհուրանքով պատմում են, որ այդ գաղանաբարոյ Զալաբին հարիւրաւոր և բիւրաւոր անմեղ քրիստոնեաների լեզուներն է կտրել տուել, որ մայրենի լեզուով չխօսեն, ականջներն է կտրել տուել ու խլացրել, որ ժամերգութիւն և ս.

պատարագի երգեցողութիւն չլսեն, աչքերն է հանել տուել և քթերն է կտրել տուել, որպէսզի բոլոր քրիստոնեաների վրայ ահ ու սարսափ ձգէ։ Իսկ ազդեցիկ քրիստոնեաներին խոստանում է եղել տալ ամեն տեսակ ապահովութիւն, փառք և պատիւ։

Տեղական բռնակալ խաները նուիրում են նշանաւոր քրիստոնեաներին լայնատարած տափաստաններ, թաւոտ անտառներ, ընտիր վարելահողեր և բէկութեան տիտղոսներ։ Կարճ խօսքով՝ քրիստոնեաներին սոսկալի տանջանքների ենթարկելու համար տրուած է նրանց (բէկերին) գաղտնի հրահանգ և վայրագութեան սանձարձակ իրաւունքներ։ Ահա այսպիսով, 15—20 հազար Հայ ընտանիքներ՝ այլևս անկարող լինելով տանել այն ամեն զարհուրելի տանջանքներն ու անչափ զրկանքները, ընդունում են Մահմէդի ազգակործան կրօնը և հետզհետէ ձուլուում են տեղական մահմեդականների հետ։ Զալալեան Սրբազանը իւր ճանապարհորդութեան մէջ՝ թրքացած Հայերի թիւը համարում է 14 հազար ընտանիք *)։ Իւրաքանչիւր Հայ ընտանիքում եթէ հաշուելու լինինք 5-ական հոգի, այն ժամանակ 14 հազար ընտանիքում կլինի 70 հազար մարդ, մի պատկառելի թիւ, որ հաւասար է Յակոբ Նահապետի սերունդի եգիպտացոց երկրից Քանանացոց երկիրը գաղթած հրէաների թուին։ Իսկ

*) Տես «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 368.

գերապատիւ Մ. եպիսկոպոս Բարխուդարեան սրբազանի ասելով, Ուտիացոց երկրի՝ Հայից դարձած մահմեդականների թիւն է 15480 տուն *։ Ուրիշ խօսքով՝ եթէ միջին հաշուով 5 մարդ ընդունելու լինինք ամեն մի ընտանիքում, այն ատեն 15480-ը բազմապատկելով 5-ով կստանանք 77400 հոգի, որ մեզ նման փոքր և ցիր ու ցան ազգի համար մի ահագին կորուստ է։ Իմ ընթերցողներին մի ճիշտ ու հաստատ գաղափար տալու համար, մի առ մի առաջ եմ բերում գըլխաւորապէս Հայկական այն գիւղերն ու աւանները, որոնք թուրքացել են ուղիղ 152 տարի մեզանից առաջ՝ արիւնարբու մահմեդականների սոսկալի լլկանքներից ու անտանելի բռնութիւններից ստիպուած։ Ծուխ

1. Խաչ-մաս	1004	ջակայք	311
2. Վանտամ	766	11. Վարդանլու և	
3. Փատառ	680	շրջակայք	260
4. Ղութդաշէն	532	12. Մուխանց (մուխն-	
5. Բումաւանում	416	անցած)	261
6. Թքեանլու	231	13. (Թուրք) Օրաբան	150
7. Զայզիտ	461	14. Բաշ-Քիւնգիւտ	203
8. Զարազան-Զար-		15. Քշլաղ Քիւնգ	171
զուն	262	16. Պտէղ (պարտէզ)	150
9. Նովուր Ղշլաղ		17. Գիս և շրջակ.	330
և շրջակ.	200	18. Կոխ-Մուխ (մու-	
10. Էրմանիտ և շըր-		խը ոտքով կո-	

*) Տես «Աղուանից երկիր», երես 229։

խել)	200	24. Բաշ գեօնուկում	652
19. Գեօկչայի դա-		25. Քիւբեալ և շրջ.	200
ւառում	5000	26. Արաշ և շրջակ.	504
20. Խալիալում և		27. Ղաբալայ և շրջ.	250
շրջակայք	1000	28. Մարսան, Ջոռ-	
21 Ղում գիւղում և		լու և Գեօրաղ-	
շրջակայք	446	լար գիւղերում	218
22. Մալըզ գիւղում		29. Աղջա-ղալայ և	
և շրջակայք	111	իւր շրջակայ	
23. Թալա և շրջակ.	200	գիւղերում։	311
		Ընդամենը	15480

Բազմապատկելով 15480×5-ով=77400 հոգու *)։ Տարաբախտաբար մենք՝ Հայերս մեր անցեալ պատմութիւնը լաւ չգիտենք։ Մեր ազգը, մեր ցիր ու ցան Հայ ժողովուրդը, նոյն իսկ մի թեթև գաղափար անգամ չունի իւր ցեղական առանձնայատկութիւնների, իւր պապերի ու նախնիքների ծագման, նրանց բնակած երկրների և նրանց կրած դառն հալածանքների ու դժբախտութեանց մասին։ Մի որևէ ազգ կամ ժողովուրդ, որ իւր պապերի ու նախնիքների կրօնի ու լեզուի, նրանց վարք ու բարքի և նրանց կատարած լաւ և վատ գործերի հետ անծանօթ է, այնպիսի ազգ և այնպիսի ժողովուրդ կորած է գլխովին.

*) Թէև գեր. Մ. եպ. Բարխուդարեանը՝ իւր «Աղուանից երկիր» գրքի 292 երեսում, Հայից մահմեդական դարձած ծխերի թիւը հաշուում է 15480 կամ 77400 հոգի, բայց ինձ թւում է, որ այս բոպէիս թրքացած Հայերի թիւը անշուշտ կլինի 100 հազար հոգի։

ժամանակիս հետ առաջ ընթացող զանազան մեծ
և փոքր ազգերի շարքերում նա ապրելու և գոյու-
թիւն ունենալու իրաւունք չունի... Ընդհանրա-
պէս ընթերցասիրութիւնից և մասնաւորապէս մեր
անցեալի ու պատմութեան ուսումնասիրութիւ-
նից՝ միանգամայն զուրկ է Հայ ժողովուրդը։
Փառք Աստուծոյ, մենք՝ Հայերս թէև ունինք հա-
րուստ ու ճոխ մատենագրութիւն, պատմութեան
վերաբերեալ ընտիր գրքեր և առատ նիւթեր։
Բայց, թող ներուի ինձ ասել, նրանք իրենց
սուղ արժէքով, իրենց նիւթերի դասաւորութեամբ
և լեզուի ու ոճի դժուարամարս կազմութեամբ
բոլորովին անմատչելի են մեր ժողովրդի մեջին
և ստորին դասի խաւերի համար։ Ընթերցողների
միաննշան մասը միայն կարողանում է օգտուել և
իւր ընթերցասիրութեան ծարաւը յագեցնել այն
պաշարով, որ մատակարարում է նրան մեր հայ
մամուլը։ Բայց Հայ մամուլի մէջ մերթ ընդ
մերթ երևացել են պատահական յօդուածներ, ճա-
նապարհորդական տպաւորութիւններ և ուսում-
նասիրական հետազօտութիւններ Տերսիմի քըր-
դացած և Տրապիզոնի Համշէն գաւառի թրքացած
Հայերի նիստ ու կացի և վարք ու բարքի մա-
սին։ Լեհաստանում կորած և Լեհացած Հայերի
մասին բաւականաչափ հայերէն և ռուսերէն լե-
զուով հրատարակութիւններ կան, որոնց մէջ ա-
ռաջին տեղն է բռնում մեծարգոյ Կար. Եղեանցի
հետաքրքրական և լուրջ հրատարակութիւնը *)։

*) «Բռնի միութիւն Լեհաստանի Հայոց ընդ եկեղե-

Այն ինչ, տարաբախտաբար, Կովկասեան
մայրաքաղաքի և հայաշատ կենդրոններից ոչ հե-
ռու տեղ գտնուած Ուտիացոց աշխարհի մէջ բըռ-
նութեամբ կրօնափոխ եղած 77400 (եօթանասուն
եօթ հազար և չորս հարիւր) Հայերի նիստ ու
կացի, վարք ու բարքի, նրանց ընտանեկան սո-
վորութիւնների և առանձնայատկութիւնների մա-
սին, որքան ինձ յայտնի է, ոչ մի տող չէ եղել
մեր Հայ պարբերական մամուլի էջերում։ Այս իսկ
պատճառով, հոգով և անկեղծ սրտանց ես ցան-
կանում եմ, որ մեր ընթերցողները խորին ու-
շադրութեամբ կարդան սոյն տողերս։ Սիրում եմ
յուսալ, որ գէթ այսուհետև մեր բանասէրներն
ու հնագէտները կգնան Ուտիացոց աշխարհ, ան-
ձամբ կտեսնեն, կգնեն և մանրամասնաբար կը-
քննեն ամեն բան։ Ապա իրենց հետազօտութեան
արդիւնքները հրապարակ հանելով, ապագայ Հայ
պատմաբանի համար ընտիր և պատուական նիւ-
թեր կմատակարարեն։ Նիւթեր, որոնք պիտի
լրացնեն մեր պատմութեան թերի կողմերը և ո-
րոնք պիտի լուսաբանեն Հայ պատմութեան մութ
կէտերը։ Ուտիացոց երկիրը իւր առատ և շա-
հաւէտ պէսպէս բերքերով, իւր բազմարդիւն հո-
ղերով և գեղանկար տեսարաններով եղեմական
կատարեալ մի դրախտ է։ Բայց ափսոս և հազար
ափսոս, որ լուսաւորութեան և կրթութեան կող-
մից շատ ու շատ յետ է մնացել։ Ահագին Կով-

ցոյն Հովմայ», Ս. Պետերբուրգ։

կասում և լայնածաւալ Ռուսիայի որևէ հեռաւոր անկիւնում ոչ մի տեղ չի գտնուի այնպիսի դժբախտ ու սոսկալի թշուառութեան մատնուած մի ժողովուրդ, ինչպէս որ Ուտիացոց երկրի բնակչութիւնն է։

Այս դժբախտ երկրի թանձր խաւարի մէջ խարխափող Հային իւր մահաբեր քնից զարթեցնող, նրա ազգաբնակութեան սիրտն ու հոգին կրթող և լուսաւորող թարմ երիտասարդ ոյժեր հարկաւոր են։ Այնպիսի թարմ ոյժեր, որոնք մի կողմից լուսաւորութիւն տարածէին այս դժբախտ երկրի ժողովուրդների մէջ, իսկ միւս կողմից հոգ տանէին նրանց մտաւորական և բարոյական վիճակի բարւոքման մասին։ Մի բարեխիղճ փաստաբան, մի մարդասէր բժիշկ և մի հմուտ մասնագէտ գիւղատնտես, ահագին փոփոխութիւն կարող են մտցնել այս դժբախտ երկրի մէջ, ուր նրանց գործունէութեան համար լայն ասպարէզ և պարարտ հող կայ. ուր նրանք կարող են նիւթապէս և բարոյապէս շահուել առատօրէն, իսկ երկրի լուսաւորութեան և բարեկեցութեան մասին մի-մի լուսաւորիչ առաքեալ հանդիսանալ։ Յուսով եմ, որ իմ տկար ձայնս առանց հետևանքի չի մնայ. հաւատում եմ, որ մեր բանիմաց և կրթուած երիտասարդներից շատերը՝ իրենց քընութեան և ուսումնասիրութեան առարկայ կը դարձնեն Ուտիացոց աշխարհի դժբախտ ժողովուրդների ընտանեկան նիստն ու կացը, նրանց վարքն ու բարքերը և ազգային սովորութիւնները։ Յուսանք և սպասենք։

Կ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐԸ ՈՒՏԻԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԻՑ ԴԱՐՁԱԾ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ ԵՒ ՆՐԱՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆՑ ՅԵՂԱԿԻՑ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ

Ինչպէս ասացի, Ուտիացոց աշխարհում բազմաթիւ Հայոց գիւղեր և գիւղաքաղաքներ Մահմեդական կրօնն ընդունեցին մեզանից ուղիղ 152 տարի առաջ՝ հարկաւ, արիւնարբու լեռնականների և պարսկական բարբարոս խանների անպաշտպան Հայ քրիստոնեաներին հասցրած սոսկալի տանջանքներից ու անվերջ հալածանքներից ստիպուած։

Մահմէդի կրօնամոլ զաւակները քարուքանդ արին տեղ-տեղ Ուտիացոց երկրի քրիստոնէական եկեղեցիներն ու սրբավայրերը, որպէսզի նորադարձ Հայ մահմեդականները ճան առանց եկեղեցու, աղօթատան և քահանայի, և ապա անճարացած՝ շուտով ընտելանան նրանց լեղուի ու կրօնի, վարք ու բարքի, նիստ ու կացի և սովորութիւնների հետ։ Ահա այսպէս, Մահմէդի կրօնամոլ և մարդակեր ներկայացուցիչները ամեն հնարք և ջանք գործ դրին քրիստոնէութեան հետքերը բոլորովին ջնջելու, որ նորադարձ Հայ մահմեդականները կարելոյն չափ շուտով ձուլուին իրենց հետ առ միշտ։

Բայց քաջարի և անվեհեր Ուտիացի Հայե-

ը անհաւասար կռիւ մղելով իրենցից տասնապատիկ աւելի մահմեդականների գերազանց ոյժերի դէմ, թէև ընկան ընկճուած և անճարացած, բարբարոս մահմեդականների կրօնն ընդունեցին, նրանց լեզուն գործածեցին, նրանց նիստ ու կացի հետ ընտելացան, բայց իրենց նախնիքների ու պապերի քրիստոնէական և զուտ հայկական նշանակալից և խորհրդաւոր անուններն ու սովորութիւնները անփոփոխ և անկորուստ պահպանեցին մինչև մեր օրերը։ Մահմեդականացած Հայ գիւղերի նախնեաց ազնիւ սիրտն ու հոգին մեծ արժէք և բարձր նշանակութիւն ունի մեր աչքում այն պատճառով, որ այդ նահատակ մարտիրոս ժողովրդի նոյն իսկ թրքացած և վաղուց կուլ գնացած կրօնամոլ զաւակները անփոփոխ և անկորուստ պահեցին ոչ միայն դարերից ի վեր իրենց ընակած գիւղերի զուտ հայկական անունները *), այլ և քրիստոնէական սրբավայրերն ու սրբազան սովորութիւններից շատերը։ Ահաւասիկ ձեզ, մահմեդականութիւն ընդունած մի շարք Հայ գիւղեր, որոնք մինչև ցարդ մնացել և մնում են անփոփոխ՝ նախկին զուտ հայկական հնադարեան անուններով, նոյն իսկ մահմեդականացածների և բուն մահմեդական լեռնականների շրթունքներում։ Օրինակի համար. 1. Խաչ-մաս,—որ նշանակում է խաչի մասունք կրող։ 2. Վանտամ—ընակարան կամ իջևան տալ։ 3. Վարդանլու—

*) «Աղուանից երկիր», տես, երես 290։

Վարդանի գիւղ կամ Վարդանշէն։ 4. Էրմանիտ Հայի գիւղ կամ Հայկաշէն։ 5. Մուխանց—մուխն անցած, կամ մուխը մարած։ 6. Օրաբան՝ օրուայ գործելու տեղ, կամ օրուայ խօսք։ 7. Պտէզ—պարտէզ։ 8. Քուն-գիւտ—քունը գտնող կամ քուն գտնելու տեղ։ 9. Կոխ-մուխ՝—մուխը կոխել ոտքով։ 10. Ղութզաշէն—խութի վրայ շինուած գիւղ։ 11. Քարմուղխ—քուրմերի *) բազմութիւն կամ քուրմերի սանդուղ և այլն։

Վերև յիշուած մահմեդականութիւն ընդունող գիւղերից ոմանց մէջ չկայ Հայոց եկեղեցի, այլ կան խաչքարեր և գերեզմանոցներ, որոնց տապանաքարերի վրայ գրուած են Հայերէն լեզուով։ Այդպիսի տապանաքարեր ես տեսել եմ և վրայի մամուռն ու խոտերը մաքրելուց յետոյ կարդացել եմ Վարդանլու թրքացած գիւղի հին գերեզմանատան մէջ և իմ տպաւորութիւնները գրել եմ 1880—81 թ. մեր պարբերական թերթերի զանազան համարներում։ Նմանապէս կան և այնպիսի թրքացած գիւղեր ևս, որոնց մէջ կանգուն մնացած են մինչև ցարդ գեղեցիկ եկեղեցի-

*) Ի դէպ է ասել, որ Զաքաթալի շրջանի Քուրմուղխը, իւր համանուն գետի կատաղի ալիքների պղտոր ջրով և քուրմերի բազմութեամբ ոչ մի վնաս չեն տուել Հայ եկեղեցուն և մեր ժողովրդին, այն ինչ, Օրբազարի (Խրիմում) անատամ Հայ քուրմը պղծեց ամբողջ Խրիմի թերակղզին իւր երկարամեայ անզործունէութեամբ, թէ մեր եկեղ. և թէ մեր ժողովրդին անփոխարինելի, ահագին վնասներ տուեց, բայց մնաց անպատիժ, իբրև զառնազգեստ գայլ և որպէս սուտ ճգնաւոր։

ներ, վանքեր և կիսակործան տաճարների փլատակներ և սրբավայրերի հետքեր. որպիսիք են՝ ս. Եղիշէի առաքելոյ վանքը, որ գտնուում է Նուխու հիւսիսային արևմտեան կողմը 7—8 վերստ հեռաւորութեամբ, հէնց ժամեղականացած Գիս (Քիշ) գիւղի մօտ։ Թէ Գիս գիւղի և թէ շրջակայքում թրքացած Հայերը շատ երկիւղածութեամբ և խորին յարգանքով են վերաբերուում դէպի այս հնադարեան սրբավայրը։ Տօնի օրը քրիստոնեայ Հայերի պէս նրանք էլ ուխտ են գնում, մատաղ են անում և պատկառանքով ներս մտնելով՝ ժոմ են վառում և ջերմ սրտանց աղօթում են իրենց մտքում։ Մինչև անգամ շատ տեղերում, մահմեդականացած Հայերը երդուում են ս. Եղիշէի անունով։

Զայզիտը թրքացած մի գիւղ է, գտնուում է Նուխի քաղաքի և Օրարան թրքացած գիւղի միջև։ Այս Զայզիտ գիւղի վերև գեղեցիկ մի սարահարթի գլխին, մինչև ցարդ կանգուն մնացել է ս. Գէորգ անունով խաչաձև, քարաշէն մի սիրուն եկեղեցի, որին թրքացած Հայ գիւղացիք վերաբերուում են մեծ յարգանքով և խորին երկիւղածութեամբ։ Ահա, այսպէս, թրքացած գիւղերից շատերի մէջ կան կիսակործան տաճարներ, Հայոց գերեզմանոցներ, Հայ արձանագրութեամբ լի տապանաքարեր և խաչքարեր, որոնց մի առ մի յիշելը մեզ շատ ու շատ հեռու կը տանէր։ Այսքան միայն կարելի է ասել, որ մահմեդականութիւն ընդունած գիւղացիների մէջ, մինչև ցարդ անփոփոխ և անկորուստ պահպանուել

ու մնացել են Հայկական հնաւանդ սովորութիւններից ու բարքերից շատերը. որպիսիք են՝ փոքրիկ մանկան քնեցնելիս մայրը երկիւղածութեամբ խաչակնքում է *) նրա վրայ և կամացուկ կերգով շշնչում է միայն Յիսուս, Քրիստոս։ Հացի խմորը հունցելուց յետոյ նորադարձ թրքուհին իւր բազուկներով խաչ է քաշում խմորի երեսին։ Քանիցս անգամ ես հարցրել եմ թրքացած կանանցից շատերին, թէ «ինչո՞ւ էք խաչ քաշում նոր հունցած խմորի վրայ»։ Միշտ պատասխանել են ինձ, միայն «խաչ» բառից խուսափելով, թէ «Աթադան, բարադան կալան բիզըմ քէօհնայ ադաթըմըզդը, «նշանագիայ» չէքիրըլս քի, բիզըմ թաղայ խամրըմըզ համեաշայ բերաքեաթլի օլսուն»։—Այսինքն՝ մեր հօրից և պապերից մնացած մեր հին սովորութիւնն է, այդ «նըշանը» քաշում ենք, որ մեր խմորը ամեն ժամանակ անհատ ու անդակաս լինի»։ Այսօրուայ պէս ես յիշում եմ հետեւեալ քրիստոնէական սովորութիւնը, որ տեղ-տեղ դեռ ևս մնացել է թրքացած գիւղերում անկորուստ։ Զատկի օրը, իմ ծննդավայր Զուղու գիւղի թրքացած ընտանիքների երեխաները խումբ-խումբ գալիս էին մեր եկեղեցու բակը և իրենց հետ բերած կարմիր ձուանելով (հաւկիթ) խաղում էին մեզ՝ հայ երեխաներիս հետ։ Բայց մենք շատ անգամ խոյս էինք տալիս նրանցից և կամ անդիտակցաբար նրանց դուրս

*) «Աղուանից երկիր», տես, երես 293։

էինք քշում մեր միջից։ Նոր եկած կերակուրը կրակի վրայից վար առնելիս նոյնպէս խաչ են անում կաթսայի վրայ։ Շատ անգամ պատմել են ինձ, որ Վարդանլու, Զայդիտ, Օրաբան, Բում և ուրիշ գիւղերի մահմեդականացած նշանաւոր ընտանիքներում կան նաև հայերէն լեզուով ձեռագրեր և տպուած գրքեր, որոնց պահպանում են մեծ խնամքով և զգուշութեամբ։ Շատ հետամուտ եղայ, շատ հարց ու փորձ արի 1881 և 1884 թ. խոստովանուեցին մեր մահմեդական եղբայրները, որ արդարև կան մի քանի անուանի ընտանիքներում հայերէն լեզուով «քեօհնայ քիթաբլար»—հին գրքեր, բայց ինչ-ինչ պատճառներով՝ ցոյց չտուին ինձ։ Ընդհանրապէս մահմեդականացած գիւղացիք չափազանց մոլեռանդ են, բայց անչափ զգոյշ ու խորամանկ են օտար ու անծանօթին պատահած ժամանակ։ Անծանօթ այցելուի հետ խօսակցութեան միջոցին ճարպիկութեամբ մի՛շտ խոյս են տալիս նրանք՝ իրենց նախկին հայկական ծագման և քրիստոնէութեան մասին որևէ խօսք բանալուց։ Այսու ամենայնիւ, Ուտիացոց աշխարհի թրքացած գիւղերում անծանօթ այցելուն ամեն քայլափոխում կտեսնի հարազատ Հայոց տիպեր և գեղանի դէմքեր պարսկական տարազով զարդարուած։ Թրքացած Հայ գիւղացոց պարապմունքները, նրանց նիստ ու կացը և սովորութիւնները՝ գրեթէ Հայկականի պէս մի և նոյնն են։ Նրանց գլխաւոր պարապմունքն է երկրագործութիւն, պարտիզպանութիւն, անասնապահութիւն, շերամապահութիւն և բանջարաբու-

ծութիւն։ Յայտնի բան է՝ սրանց երկրագործական գործիքներն ու անասնապահութեան եղանակը հնագարեան և նահապետական ձևով է՝ ինչպէս իրենց Հայ ցեղակիցների մէջ։ Իսկ ուսման, գիտութեան, նորանոր արհեստների կատարելութեան կողմից, նրանք Հայերից էլ աւելի ստոր վիճակի մէջ են։ Թրքացած գիւղացի կանայք հագնում են տեղական պարսկական տարազով, բայց անծանօթ տղամարդ տեսնելիս, փախչում ու թաքնուում են, ճիշտ տեղական Հայ կանանց պէս։ Այն ինչ՝ տեղացի զուտ պարսկական կամ լեռնական մահմեդական կանայք, անծանօթի հետ բաց երեսով ասում, խօսում և զրուցում են արձակ ու համարձակ։ Ամբողջ աշխարհին քաջ յայտնի է, որ մահմեդականները առհասարակ կրօնամոլ, բարբարոս և արիւնարբու թշնամի են բոլոր քրիստոնեաների հետ։ Բայց զարմանալին այն է, որ Ուտիացոց աշխարհի բուն պարսիկներն ու լեռնցի մահմեդականները այն աստիճան անհաշտ և սխերիմ թշնամի չեն քրիստոնեաների հետ, որչափ որ Հայից դարձած թուրքերը։ Մահմէդի հարազատ զաւակները ուտում խմում են Հայ քրիստոնեաների կերակուրները և նրանց հետ շփումն ու յարաբերութիւն ունենալը պիղծ (հարամ) չեն համարում։ Այն ինչ Հայից դարձած մահմեդականները վերջին ծայր մոլեռանդ (ֆանաթիկ), կատարեալ բարբարոս և արիւնարբու թշնամի են իրենց արիւնակից և ցեղակից նախկին Հայ քրիստոնեայ եղբարց հետ։ Մահմեդականների ընդհին յատկութիւննե-

րից մինն էլ ձրիակերութիւնն է, կամ աւելի լաւ է ասել՝ ուրիշների հաշուով ապրելն է։ Հայից դարձած մահմեդականը պատահմամբ Թուրքի այգու մօտից եթէ անցնելու լինի, սուս ու փուս ներս կմտնէ, կուշտ կուտէ հասած պտուղներից և մի քիչ էլ կքաղէ ճանապարհին ուտելու համար և նորից դուրս ելնելով, լուռ ու մունջ կշարունակէ իւր ճանապարհը։ Բայց Աստուած չանէ, մի և նոյն մահմեդական արարածը եթէ Հայի այգու կամ պարտէզի մօտից անցնելու լինի, անպատճառ մի քանի հոգի էլ իւր հետն առած, ներս կմտնէ (այգին), ագահաբար կուտէ ճաքելու չափ։ Իբրև ճանապարհի պաշար, կքաղէ այնքան, որ հազիւ կարողանար տանել իւր հետ։ Յետոյ պըտղատու ծառերի դալար ճիւղերն ու ոստերը ջարդ ու փշուր կանէ, հասած պտուղները քաղելով և թափ տալով կտրորէ ոտքի տակ խաղաղ սրտով։ Բայց եթէ այգու մէջ որ և է անասուններ լինին, որպիսիք են՝ գառներ կամ հորթեր, նրանցից մէկի ոտքը (ոտք-ոտք) կկտրեն, տեղն ու տեղը իսկոյն խորոված կանեն, կուտեն և ապա հանգիստ խղճով կշարունակեն իրենց ճանապարհը։ Ահաւասիկ ձեզ հզօր փաստեր Հայ դարձած մահմեդականների անխղճութեան մասին։ 1897 թ. իմ հարազատ եղբայրներս երբոր իմանում են, որ ս. Մեռնօրհնութեան հանդիսից յետոյ մի քանի օրով պիտի գնամ իրենց մօտ հիւր, նախապէս մի քանի գառներ թողնում են մեր այգու մէջ, որ մի լաւ գիրանան—չաղանան։ Նախքան մեր տուն հասնելս, մի օր, երբ իմ եղբայրներս սաստիկ զբաղուած են լինում իրենց դաշտային գործերով, մտել էին մեր այգին մի քանի Թուրքեր, կերել էին հասած ամեն տեսակ պտուղներից, վերցրել էին իրանց ճանապարհին ուտելու համար ահագին պաշար և ապա պարարտ գառան յետևի ոտքը կտրել, խորոված տրել, կերել էին և յետոյ հանդարտ խղճով հեռացել էին՝ թողնելով խեղճ գառան արիւնաթաթախ և սոսկալի տանջանքների մէջ, որի սարսափելի ցընցումներն ու աղիողորմ աղաղակները՝ կոշտ ու կոպիտ Թուրքերի քարացած սրտերին և վայրենի հոգուն մեծ ուրախութիւն և խնդութիւն է պատճառած եղել, ինչպէս յետոյ ականատես երեխաները պատմեցին ինձ։

Թիւրքիայի տխրահռչակ ենիչէրիներից և անխիղճ բաշիբուզուկներից և կիսավայրենի չերքէզներից ու անգութ քիւրդերից ոչինչով պակաս չեն Ուտիացոց երկրի Հայ մահմեդականները իրենց անսահման մոլեռանդութեամբ և անզուսպ բարբարոսութեամբ։ Խաղաղ, չափազանց աշխատասէր և երկրագործութեան սիրահար ժողովրդի ամբողջ տարուայ թափած դառն քրտնքի արդար վաստակը, մէկ էլ կտեսնէք, որ միքանի ժամուան մէջ հող ու մոխիր է դառնում, որով ամբողջ երկիրը քայքայւում է տնտեսապէս և ընկնում դժբախտ վիճակի մէջ։ Վերջին 25—30 տարուան ընթացքում, համարձակ կարելի է ասել, որ հէնց միմիայն Զռուլու և Միրզաբէկլու իրար կից 100 տնից բաղկացած գիւղերում, խոտի, հացահատիկների հարիւրաւոր և հազարաւոր դէզեր,

տներ և գոմեր հրդեհուել — այրուել ու մոխիր են դարձել, բայց չարագործները անյայտ ու անպատիժ են մնացել։ 60—75 կարիճ և քաջ Հայ երիտասարդներ հէնց վարելիս, ցանելիս և կամ հնձելիս՝ գնդակահար են եղել վերջին 30 տարուայ մէջ։

Դժբախտ երկրագործ ժողովրդի եղջիւրաւոր լենդանիների եղջիւրները արմատից փշրելը, ականջներից մէկը կտրելը, կամ պոչից ու աչքից զրկելը և կամ յետևի ոտքի ծունկի վերևից հատ երակը ջլատելը, Թուրքերի համար շատ հասարակ և սովորական բաներ են։ Այսպիսի վայրենի բարբարոսութեամբ նրանք ուրախանում և զուարճանում են, որ իրենց հարևան գեաւուրները (անհաւատները) մեծամեծ վնասներ են կրում և թշուառ վիճակի մէջ են ընկնում։ Վերջին 1897 և 1900 թ. երբոր եղել եմ իմ հայրենի աշխարհում, տեղական Հայ և Թուրք ազդեցիկ գիւղացիներին մի՛շտ յորդորել և խրատել եմ, որ իրենց այդպիսի կործանիչ արարքներին վերջ տան ընդ միշտ։ Իբրև օրինակ իմ տեսածներիցս առաջ բերելով՝ ասել եմ, թէ «Խրիմի ընդարձակ դաշտերում, դուք կտեսնէք խոտի բազմաթիւ դէզեր, դարմանով լիքը մարագներ, որոնք պահւում են իբրև պաշար միւս—հետևեալ տարուայ համար։ Սակայն այդ խոտի դէզերին կամ դարմանով լիքը մարագներին ոչ ոք չի մօտենում, չի գողանում և չի հրդեհում ու այրում։

Դուք կտեսնէք Խրիմում անթիւ ու անհամար մշակուած հրաշալի պարտէզներ ու այգի-

ներ՝ հազուագիւտ և ազնուացրած պտղատու ծառերով և վազերով։ Բայց այդ ազնիւ ծառերից գոնէ մի հատ ոչ ոք չի կտրել կամ արմատախիլ չի արել մինչև ցարդ՝ նրանց մշակող տէրերին վնասելու դիտաւորութեամբ։ Միայն այս կողմից կարելի է հետևել Խրիմցի ժողովրդների բարի օրինակին, չնայած, որ այնտեղ էլ թէև մահմեդական թուրքեր և թաթարներ շատ կան, բայց Կովկասի թուրքերի պէս անխիղճ մարդասպանութիւն, գողութիւն, աւազակութիւն և սոսկալի բարբարոսութիւններ չեն անում նրանք»։ Ընթերցող, երևակայեցէք իմ անմխիթար դրութիւնը. համեմատական օրինակներ բերելուց յետոյ բարեկամներիցս ոմանք ասում էին իմ ականջիս. «Տէր-տէր ջան, այդպիսի բաներ մի՛ ասիր մեր միամիտ ժողովրդի մօտ, ապա թէ ոչ՝ կասեն այնքան քաղաքներ ու աշխարներ տեսած քահանայ մարդ սուտ և անհաւատալի բաներ է պատմում մեզ։ Բայց եթէ ձեր պատմածները ճիշտ լինին, այն ժամանակ կարելի է ասել, որ Խրիմը մի դրախտ է և նրա ընակիչներն էլ կատարեալ հրեշտակներ են. երանի՛ նրանց, եթէ այդպիսի խաղաղ երկրում են ապրում»։

Ուտիացոց աշխարհի ընդհանրապէս բոլոր ազգաբնակութեանց և մասնաւորապէս Զոլու, Միրզաբէկլու, Սուլթան-Նուխու և մասամբ Նիժ գիւղաքաղաքի խաղաղ և աշխատասէր երկրագործ ժողովուրդների համար սոսկալի պատիժ ու պատուհաս են եղել և են Հայից դարձած Բուլ գիւղի հարուստ և զօրաւոր Թուրք բէկերը, որոնցից

դողում, սարսափում են թէ հասարակ ժողովուրդ-
ները և թէ պետական ստորին պաշտօնեաները։
Նրանք վերջին 30—35 տարուան ընթացքում՝ վե-
րոյիշեալ գիւղերին յատկացուած անագին տարա-
ծութեամբ պետական հողերը խլեցին Հայ գիւ-
ղացիներից բռնութեամբ և զէնքի ոյժով և ապա
կամաց-կամաց իւրացրին ու սեփականացրին ի-
րենց։ Այս բանի մասին ով որ ձայն հանեց, նրա
տունն ու տեղը հրդեհին զոհ գնաց, ով որ իշխա-
նութեան յայտնելու քաջութիւն ունեցաւ, նրան
իսկոյն և եթ գնդակահար անելով՝ սպանել տը-
ւին։ Ահա այսպիսով, վախ ու սարսափ անելով՝
սպանել տուին։ Ահա այսպիսով, վախ ու սար-
սափ տարածեցին ամբողջ Ուտիացոց աշխարհում,
որ ոչ ոք չհամարձակուի որ և է շշուկ հանել կամ
իշխանութեան ականջը լուր հասցնել, որ խա-
ղաղ երկրագործ ժողովուրդը հլու հպատակ և կա-
տարեալ ստրուկ դառնայ իրենց, որպէսզի իրենց
փաշայական կամայականութեան, անհուն փառա-
սիրական ձգտումներին կարողանան լիովին բա-
ւարարութիւն տալ։ Կարճ խօսքով, ամբողջ Ու-
տիացոց աշխարհի բոլոր ազգաբնակութեանց յե-
տադիմութեան, դժբախտութեան և նրանց տըն-
տեսական ու բարոյական աւերման և քայքայման
իսկական և միակ պատճառը եղել են և հն Բումի
սանձարձակ և անդուսպ թուրք բէկերը։ Որոնք ոչ
ցանում են, ոչ հնձում, որոնք ոչ մի արհեստով և
առևտրով չեն պարապում։ Բայց նրանցից ամեն
մէկը իւր տաննեակ ծառաներով ապրում է ճոխ
և փառաւոր կերպով և ամեն տեղ միամիտ ժո-

ղովուրդների մօտ իրեն ցոյց է տալիս որպէս
երկրի տիրապետող իշխան և տէր։ Այդ ինքնակոչ
բէկերը՝ երկրագործ խաղաղ ժողովուրդների ա-
րիւնն ու արդար քրտնքի արդիւնքներն են ծը-
ծում անյագ տզրուկի պէս՝ իրենց անխիղճ վաշ-
խառութեամբ, և ապրում են թշուառ գիւղացիներ-
ի հաշուով։ Այդ անդուսպ և դաժան բէկերի միակ
և սովորական զբաղմունքներն են՝ ոտքից գլուխ
զինուած, հեծած իրենց նժոյգ ձիու վրայ, տաս-
նեակ ձիաւոր ծառաներով գիւղէ գիւղ թափառել,
հին տակոսները հաւաքել և կամ բարդել մայր
գումարի վրայ և ապա պարտամուրհակները փո-
խել և գրել իւր ուզածի պէս. այս ու այն գիւ-
ղացիներին ստիպել, որ իրենց համար վառեակը
տակը դրուած ընտիր փլաւ և այլ համադամ խոր-
տիկներ պատրաստեն և իրենց ձիերին առատ
գարի ու դարման տան։ Այս ամենը ձրիաբար
տալուց զատ, թշուառ գիւղացիք բէկի ամեն մի
ռուբլուն տոկոս են վճարում ամսական 20—30 և
երբեմն 40 կոպ.։ Յայտնի բան է՝ կալուածատէր
բէկերի հողերի վրայ ցան անող գիւղացիք չար-
չարւում, տանջւում են իրենց մարդկանցով և ա-
նասուններով և ապա բէկին հասանելի հացահա-
տիկներն ու դարմանը և խոտը մաքրած, պատ-
րաստի տանում և լցնում են նրա ամբարը։ Բէկե-
րի սիրած պարապմունքներից մինն էլ որսորդու-
թիւնն է, որ գեղեցիկ բազէները թառած իրենց
մի թաթի վրայ, ընտիր երիվարի վրայ հեծած,
իրենց ծառաներով և որսորդական շներով սա-

ըեր ու ձորեր, անտառներ ու դաշտեր են չափ-
չփում։

Այդ դաժան և սանձարձակ թուրք բէկերի
համարձակութեան ու յանդգնութեան չափ ու
սահման չկայ. ինչ որ իրենց քէֆն ու սիրտը ու-
զեն, այն էլ կանեն արձակ ու համարձակ։ Ահա-
ւասիկ, իմ ընթերցող, ձեզ հզօր փաստեր, որոնք
պատահել են տողերիս գրողի աչքերի առաջ,
1897 և 1900 թ. հետևեալ կերպով։ 1897 թ. նըս-
տած մի գիրք էի կարդում իմ հայրական տան
սիրուն բակի մի հաստարմատ տանձենու շուաքի
տակ։ Եղբայրներս իրենց հնձուոր մշակներով
զբաղուած էին իրենց երկրագործական դաշտայ-
ին աշխատանքներով։ Այնպէս որ տան մէջ մնա-
ցել էին կանայքն ու փոքրիկ երեխաները և ես։
Կէսօրին մեր տան բակի դարբասի մեծ դուռը
սկսեցին բաղխել և Թուրքերէն ինչ-որ անո-
րոշ խօսքեր ասել։ Մայրս՝ որ իւր սրտի կարօտն
առնելու համար նստած էր կողքիս և գիշեր ու
ցերեկ չէր հեռանում իւր սիրելի որդու մօտից,
յանկարծ շփոթուեց և հասկացրեց ինձ, որ շու-
տով սենեակ մտնեմ և եկող անկոչ հիւրերին եր-
բէք չերևամ։ Զարմացած ու ապշած հարցրի մօ-
րիցս.—Ո՞վքեր են եկող ձիաւոր Թուրքերը և ի՞նչ
են կամենում ձեզանից։—Բումեցի ձիաւոր մի
քանի Թուրքեր են եկել և ուզում են տանել Ճաշ-
կերոյթի համար շինուած ընկուզէ ծալովի սեղա-
նը X բէկի համար։—Ինչո՞ւ, արդեօք, մեր տան
սեղանը ծախե՞լ էք Թուրքի վրայ։—Ա՜խ, տէրտէր
Ջան, դու փոքր երեխայութիւնից հեռացար մեր

երկրից և, ինչպէս երևում է, արդէն շատ բան
մոռացել ես։ Մեր տան սեղանը պահանջող Թուր-
քը մի զօրաւոր բէկ է, որ իւր ձեռքի տակն ու-
նի մի քանի տասնեակ զինուած ծառաներ։ Ահա
մի քանի ամիս է, որ բէկը պահանջում է մեր
սեղանը, էհ, ես ի՞նչ անեմ, եթէ չտանք նրան
փէշքէշ (ձրի), այն ժամանակ մեր տունն ու տե-
ղը կայրի կրակով, զաւակներիս մէկ-մէկ գնդա-
կահար անել կտայ։ Ուրիշ ճար չկայ, սեղանը
պիտի տամ լուռ ու մունջ, որ տանեն և իրենց
աչքը կոխեն, իսկ դու շուտով սենեակ մտիր, մի
երևայ, որ քեզ չտեսնեն և մի որևէ վնաս չտան
քեզ։ Հաստատ գիտեմ, որ դու կրակոտ բնաւո-
րութիւն և անվախ սիրտ ունիս. դու մեծացել ու
ընտելացել ես մեծամեծ քաղաքներում բոլորովին
ազատ ու անկախ հոգով... Ա՜խ, տէրտէր Ջան,
գլխիդ մատաղ լինի մայրդ, մեր երկրի բանն ու-
րիշ է. կարգիդ մեռնեմ, ոչ մի խօսք չխօսես և
երբէք ձայն չհանես, հա՜. երբոր Թուրքերը մեր
բակը մտնեն, դու սենեակից դուրս չգաս։ Ապա
թէ ոչ, եթէ Թուրքերը իմանան, որ դու իմ հա-
րազատ որդիս ես, այն էլ տէրտէր ես, հաւատա-
ցիր ինձ, որ իսկոյն կգան և կսպանեն քեզ։ Յե-
տոյ ես ի՞նչ անեմ, ո՞նց դիմանամ այս ծերութեան
հասակում։—«Է՛հ, մայրիկ, շատ լաւ ես ասում,
պիտի չէ՞ որ մեր դարբասի դռները բացուելուն
պէս Թուրքերը տեսան ինձ և հետաքրքրութեամբ
սկսեցին դիտել մեր տան ամեն ծակ ու ծուկերը։

— Ճիշտ է, տէրտէր Ջան, թէև այդ անօրէնները
տեսան ամեն բան, բայց ես նրանց ասել եմ նախա-

պէս, թէ «մեր տանը մի հիւր ունենք»։ Ի սէր Աստուծոյ, եթէ ինձ սիրում ես, շուտով մտիր սենեակդ և մի դուրս գայ այն տեղից, մինչև որ անիրաւ Թուրքերը չհեռանան մեր բակից։

Այն աստիճան յուզուած ու զայրացած էի այդ վայրկեանին, որ չգիտէի՝ լսե՞լ մօրս ստրկական խրատները, թէ՞ ցոյց տալ ամբարտաւան և յանդուգն Թուրքերին, որ մենք չենք ապրում Թիւրքիայում, այլ՝ Կովկասում և այն էլ հզօր Ռուսիայի իշխանութեան տակ։ Ձեռքս հաստ ու ծանրը մի փայտ առած, կամաց-կամաց քայլերս ուղղեցի դէպի Թուրքերը և շեշտելով հարցրի նրանց.—Ի՞նչ էք ուզում։ Ձիաւոր Թուրքերից մէկը կմկմալով ասաց ինձ.—Այս ընտանիքի մէջ ընկուզէ փայտից շինուած ծալովի սեղանն է ուզում մեր տէր Х բէկը։—Փողն ուղարկե՞լ է։—Մուսուլման (միւսիւլման) բէկն ինչո՞ւ պիտի փող տայ մի որևէ «գեաուրին»։ Գեաուր նախատական խօսքից յետոյ, այլ ևս չկարողացայ զսպել իմ զայրութս և ձեռքիս փայտը բարձրացնելով, սկսեցի սպառնանքով թափահարել նրանց վրայ։—Հիմա ձեզ բոյորիդ էլ ես կտոր-կտոր կանեմ,—ասացի բարկացած. մի՞թէ պարտաւոր է քրիստոնեայ ժողովուրդը ձրի կերակրել ամեն մի պատահող գողերին ու սոված գայլերին։ Ի՞նչպէս է ձեր անունն ու ազգը։ Թուղթ ու մատիտ հանեցի գրպանիցս, որ գրեմ և յայտնեմ, ուր հարկն է։ Բայց պոռոտախօս և վախկոտ Թուրքերը մտրակեցին իրենց ձիերին և մի ակնթարթում անյայտացան մեր տան մօտից։ Մայրս զարմա-

ցած ու ապշած էր մնացել իւր տեսած այս հաղուագիւտ և տարօրինակ դէպքի վրայ և տարակուսած հարցնում է ինձնից. «Տէր-տէր Ջան, ախր ի՞նչ ասացիր և ի՞նչ պիտի գրէիր մի կտոր թղթի վրայ, որ արիւնարբու Թուրքերը վախից սարսափած՝ այնպէս շուտով կորան-գնացին իրենց տները»։—Նրանց ազգանունները միայն հարցրի, որ գրեմ և յայտնեմ իշխանութեան, բայց նրանք լեղապատառ փախան-գնացին մեր գիւղից։—Ա՜խ, Տէրտէր Ջան, ախր մենք Հայերս լեզու չգիտենք, տէրութեան կարգն ու կանոնը և օրէնքները չգիտենք, թուով 15—20 անգամ աւելի քիչ ենք Թուրքերից։ Նրանք ոտքից գլուխ զինուած են կատարելագործուած նորագոյն զէնքերով, այն ինչ՝ մեր Հայերից շատերը չսխմսխոլու ժանգոտած հրացան անգամ չունին։ Բացի դրանից, մեր Հայ և Թուրք երկրագործ գիւղացիք մեր հարևան Թուրք բէկերից պարտք են առնում, սարսափելի նեղութեան ժամանակ մի 10—15 ռուբլի։ Եւ այդ չնչին գումարը մի քանի տարուց յետոյ հասնում է 60—70—100 ռուբ. այնուհետև այդ պարտքը հետզհետէ աճում է արագաբաղ և այնպիսի ահագին գումար է դառնում, որի տոկոսն անգամ գիւղացին չէ կարողանում վճարել մինչև իւր մահը։ Այսպիսի անյաջող և աննպաստ պայմանների մէջ լինելով, ասա՛ ինձ, որդի Ջան, կարգիդ մեռնեմ, մենք՝ Հայերս արդեօք կարո՞ղ ենք դիմադրել Թուրքերին և նրանց անիրաւ ու անարդար պահանջները չկատարել, երբ մեր նեղութիւնները իշխանութեան

յայտնող չկայ, երբ մեր անսահման չարչարանքներին և անվերջ զրկանքների մասին ձայն ու աղաղակ բարձրացնող չկայ։ Բայց եթէ այդպիսի անվեհեր և քաջ մարդ պատահի մեր գիւղերում, նա իսկոյն կատաղի Թուրքերի հրաշէկ գնդակներին զոհ կդառնայ։

—Ա՜յ, քո սպառնալիքդ թէև Թուրքերին վախ պատճառեց, բայց իմացած եղիր, որ այդ բանը մեզ վրայ շատ Թանգ պիտի նստի։—Ո՛չ մի բան չի լինի, մայրիկ, ասացի ես. Թուրքերի յանդուգն ոտնձգութիւնները պէտք է սանձահարեմի կերպ, ապա թէ ոչ նրանց անվերջ պահանջները կատարել անկարելի է։—«Ա՜խ, որդեակ իմ, դու երեխայ ժամանակից հեռացած լինելով, մոռացել ես շատ բան, Թուրքերը վրէժխնդիր ու ոխակալ են, երբևիցէ իրենց վրէժը կլուծեն մեզանից»։ Անցան մի երկու տարի, արդարև միշտ տխուր լուրեր և ուշագրաւ նամակներ էի ստանում հայրենի աշխարհի դժբախտ գիւղերից. Թէ Թուրք բէկերը քանդում են մեր տները, այլ ևս վարելու, ցանելու, հնձելու և ապրելու ոչ մի հնար չունինք, կամ ձեռքի տակից օգնիր մեզ, որ կարողանանք ապրել մի կերպ, կամ որևէ տեղ, մանաւոր կալուածքում ազատ հող գտիր, որ մենք՝ Հայերս գաղթենք և ազատուենք այս անկուշտ գայլերի սուր-սուր ժանիքներից...։ 1900 Թ. ևրեք զաւակներիս հետ մեր գիւղումն էի։ Մի օրից յետոյ տեսնեմ, որ մի այլակերպ պառաւ Թուրք կին ամեն օր մտնում է մեր տուն, ուտում-խըմում է և ապա 30—40 կոպէկ էլ «դիշքիրասին»

(ատամնավարձ) ստանում է ու հեռանում։ Եւ ամեն անգամ էլ հարցնելիս է եղել մերոնց, թէ «Տէրտէր աղան ե՞րբ պիտի գնայ,—վանդի իմ որդիս ուզում է տեսնել նրան և պատուել, ինչով որ կարող է»։ Մերոնք ամեն օր փսփսում են իրար ականջում մի ինչ-որ ծածուկ բան և ինձ չեն ասում, որպէսզի երեխաներս չվախենան։ Բայց ես յանդիմանեցի եղբայրներիս, թէ ինչո՞ւ էք ձեր շէմքից ներս թողնում ամեն մի պատահական արարածի, քանի որ նրանցից բացի վնասից, ուրիշ ոչ մի օգուտ չունիք։—Տէր հայր ջան, բայց դու գիտե՞ս այս այլանդակ պառաւ Թրքուհին ո՞վ է։—Ոչ, չգիտեմ. ասացէք ինձ, ո՞վ է նա և ի՞նչ կախում ունիք նրանից։—Նա մայրն է այն արիւնարբու Թուրք աւազակապետի, որ մի քանի անգամ փախել է Սիրիրից և այժմս իւր նման աւազակների գլուխն անցած՝ Թալանում, կողոպտում է իրեն պատահող անզէն գիւղացիներին, իսկ այժմս եկել է մեր գիւղը և իջել է իւր ազգական մի Թուրքի մօտ։

—Ամեն օր մեր գիւղի կալերի մօտից յափշտակում է Հայ քրիստոնեայ երեխաներ, որոնց ծնողներից 15—25 և 30 ռուբլի փրկանք առնելուց յետոյ, նրանց ազատ է թողնում։

Իսկոյն մի նամակ գրեցի, որ ուղարկեմ գաւառական ոստիկանին, բայց ոչ ոք չհամարձակուեց տանել ու հասցնել։ Երկիւղ կրելով, որ նամակս եթէ Թուրք աւազակների ձեռքն ընկնի, իրենց կեանքը վտանգի պիտի ենթարկուի։ Ինքս կամեցայ ձի նստել, գնալ ոստիկանի մօտ և հաս-

կացնել նրան ամեն բան, բայց ոչ ոք խորհուրդ չտուեց. իսկ եղբայրներս աղաչում էին ինձ, որ մթնելուն պէս տեղեակից երբէք դուրս չգամ։ Վերջապէս մի երկու քաջերին խրախուսեցի, համոզեցի և ուղարկեցի ուր հարկն է, որ բերանացի խօսքն և յայտնեն ինչ-որ պէտք է։ Գնացող երիտասարդները լուր բերին, թէ զաւառական ոստիկանը բացակայ էր, իսկ նրա օգնականը խոստացաւ կտրուկ միջոցներ ձեռք առնել և անյապաղ կարգադրել ինչ-որ պէտք է։

Հէնց այդ օրը աւաղակապետի մայրը մօտեցաւ ինձ և պարսկական խորամանկ կեղծաւորութեամբ իմ քէֆս ու առողջութիւնս հարցնելուց յետոյ, ասաց ժպտալով. «Տէրտէր աղա, Ե՞րբ պիտի գնաք և՞ր ճանապարհով»։—Ի՞նչ շատ էք հետաքրքրւում իմ գնալու ժամանակի և ճանապարհի մասին, ասացի. չլինի՞ թէ ձեր քաջ որդին կամենում է ինձ կողոպտել և սպանել։—Ո՛չ, Աստուած չանէ, ասաց կեղծ ժպիտով այլանդակ թրքուհին։ Իմ որդիս ուզում է ձեզ պատուել ու յարգել, իւր ընկերներով ուղեկցել ձեզ հետ, որ ոչ ոք չհամարձակուի ձեզ մօտենալ, որպէսզի անփորձ հասնէք մինչև երկաթուղու կայարան։—Շնորհակալ եմ ձեր որդու անչափ հոգատարութեան համար, որ այդ ասոիճան անհանգիստ է լինում իմ և զաւակներիս մասին. իմ կողմից յայտնեցէք իրեն, որ ես պիտի ճնամ մի քանի ամիս և ապա կգնամ նոր շինուած արքունական ճանապարհով։ Հետևեալ օրը, ծպտեալ կերպով, զինուած երկու հարազատներիս ուղեկցութեամբ

երեխաներիս հետ հասայ Բագու-Թիֆլիզեան երկաթուղու կայարաններից մէկը, իսկ այնտեղից էլ Թիֆլիզ։ Ապա թէ ոչ՝ Սիբիրից փախած թուրք աւաղակապետը պիտի կարանաւորէր ինձ և ամենածանր փրկանք պիտի պահանջէր իմ հարազատներից։

Տեսնելով և ի մօտոյ ծանօթ լինելով մահմեդականացած Հայերի այս ասոիճան մոլեռանդութիւնն ու դաժանութիւնը, ես միշտ ասել եմ և էլի կասեմ, որ հրեշտակային բնաւորութիւն ունեցող և տոհմային ցեղական ընտիր յատկութիւններով օժտուած քրիստոնեայ մի որևէ ազգի զաւակ՝ լինի նա Հայ, Յոյն, Ասորի, կամ նոյն իսկ քաղաքակրթուած գերմանացու կամ ֆրանսիացու զաւակ, երբոր իւր հայրենի կրօնը փոխելով՝ ուրիշ կրօն է ընդունում, նա դառնում է կատարեալ մի գազան՝ իւր նախկին ցեղակիցներին ՀՏասելու և խպառ ջնջելու գործում։ Կարծէք թէ այսպիսի կրօնափոխների հաւատը է ձեռք ու յարմարեցրած թրքական յայտնի առածն, որ ասում է. «Շարաբտան-չախրդան դէօնան սիրքէ, չոխ քեասքին օլար»։—Այսինքն՝ գինուց դարձած քացախը, շատ կտրուկ կլինի։ Ուտիացոց աշխարհի երկրագործ և աշխատասէր ժողովրդին՝ այս անիրաւ և անխիղճ բէկերի անվերջ հալածանքներից ու հարստահարութիւններից փրկելու միակ միջոցն է ուսում և կրթութիւն տալ նրանց երեխաներին. իսկ երկրագործ Հայ և թուրք ժողովուրդների սրբազան պարտքն է միասիրտ և միահոգի կռիւ մղել անիրաւ բէկերի և

անխիղճ վաշխառուների անիրաւութեանց և ապօրինի գործողութեանց դէմ։ Անարդար և ապօրինի ու մութ գործերով պարապող մարդկանց կործանիչ արարքների մասին իսկոյն պիտի յայտնել տեղական իշխանութեան։ Ահա այսպիսով միայն անվերջ չարիքներից կազատուի երկրագործ Հայ և Թուրք ժողովուրդը և կամաց-կամաց զարթելով իւր մահաբեր քնից, կսկսէ զարգանալ և բարգաւաճել թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Այսպիսով միայն կարելի է դէպի առաջ ընթանալ, քաղաքակրթութեան և մտաւոր առաջադիմութեան կենսատու լուսով լուսաւորուել և նրանց բարիքները լիուլի վայելել։

Ուտիացոց աշխարհում կան մօտաւորապէս երեք հազար (3000) տուն Հայ ընտանիքներ *), որոնք գաղթել են զանազան ժամանակներում՝ Արցախի, Խոյի, Թեհրանի և Սպահանի կողմերից, որոնք խօսում են իրենց հետ բերած տեղական Հայ բարբառներով և որոնք տեղացիներից կոչւում են սարեցի Հայեր (Դաղլը Էրմանի)։ Սարեցի Հայերը բնակւում են Նուխու հարաւային կողմի լեռների, սարահարթերի և բլուրների վրայ, որոնք պարապում են բացառապէս երկրագործութեամբ և անասնաբուծութեամբ։ Իսկ ուսման, կրթութեան և արուեստների գիտութեան կողմից, սարեցի Հայերը ևս իրենց հարևան Ուտիախօս և Թրքախօս Հայերի պէս գտնւում են աննախանձելի վիճակի մէջ։

*) «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», տես երես 368։ «Աղուանից երկիր», տես երես 295։

Հ

ՎԵՐՋԱԲԱՆ

Ուտիացոց աշխարհի Ուտիախօս և Թրքախօս Հայերի և Հայից դարձած մահմեդականների բարոյական, նիւթական և տնտեսական աննախանձելի վիճակը ցոյց տուի այնպէս, ինչպէս որ կայ այս րոպէիս։ Ուտիացոց երկիրը իւր բարեխառն կլիմայով և չափազանց պտղաբեր ու արգաւանդ հողերով ու մարգագետիններով, չնայելով որ իւր նմանը չունի ամբողջ Կովկասում, բայց նրա բնակիչները գտնւում են աննախանձելի վիճակի մէջ։ Ինչեր ասէք, որ չէ բուսցնում ու աճեցնում այդ օրհնած հողը, ինչպիսի թանկագին բերքեր ասէք, որ չէ արտադրում այդ սքանչելի երկիրը իւր ժրաջան մշակողների համար։ Ամենաընտիր հացահատիկների և պատուական պտուղների ամեն տեսակից զատ, նա բուսցնում է նաև այնպիսի հազուագիւտ բոյսեր և ծառեր, որոնց բուն հայրենիքը Հնդկաստանն է։

Սրանից երեք տարի առաջ՝ ես տեսայ մեր տան բակում սև պղպեղի մի քանի ծառեր, որոնց պտուղները չէ կարելի զանազանել Հնդկաստանից բերուած սև պղպեղի հատիկներից։ Նոյնպէս տեսայ խնձորի մի ծառ, որ տարուայ մէջ երկու անգամ է պտուղ տալիս. նախ՝ յունիսին և ապա հոկտեմբեր ամսին։ Ուտիացոց երկրի ազնիւ մեղրաքն ու կաղինը, բրինձն ու շագանակը, նուռն

ու սերգեիլը և այլ քաղցրահամ պտուղները յայտնի են ամեն տեղ։ Այդ երկրի ժողովուրդը պարապում է բացառապէս երկրագործութեամբ՝ բառիս բուն և ընդարձակ նշանակութեամբ։ Այդ հարուստ երկրի ժողովուրդը չափազանց աշխատասէր, նստակեաց, խաղաղ, տոկուն և վերին աստիճանի չարքաշ ժողովուրդ է։ Նրա ուշքն ու միտքը, խելքն ու զգացմունքները կենդրոնացած են միայն և միմիայն երկրագործութեան վրայ։ Ուտիացոց երկրի համբերատար ժողովուրդը սոված-ծարաւ կմեռնի, բայց ուրիշ երկիր չի գաղթի և ուրիշից որևէ ձրի բան ստանալ երբէք չի կամենայ։ Ուտիացոց երկրի ժողովրդի սիրած և պաշտած յատկանիշներն են՝ անդուլ աշխատասիրութիւն, շիտակութիւն, ասպետական վեհանձնութիւն, ճշտապահութիւն, հերոսական անվեհերութիւն և պատուազգածութիւն։ Փող և հարստութիւն դիզելու նպատակով նա երբէք չէ թափառում մեծամեծ և վաճառաշահ քաղաքներ։ Բագու-Թիֆլիզեան երկաթուղու գիծը բացուելուն պէս, կրկնում եմ, Կովկասի զանազան անկիւններից, գիւղացիք թողին իրենց մանգաղն ու արօրը և վազեցին Բագու, Թիֆլիզ և ուրիշ ամենահեռաւոր տեղեր՝ շուտով հարստանալու նպատակով։ Դէպի Բագու արշաւող Հայ գիւղացիների մասին ամեն օր կարդում ենք մեր օրաթերթերում, որ նրանցից շատերը տարածում են յետընկած գիւղերում զանազան տեսակ ախտեր և վարակիչ հիւանդութիւններ և խախտում են Հայոց տոհմային ընտիր ու մաքուր բարքերը։ Եւ

տարաբաղդաբար այդ կորստաբեր չարիքները արմատախիլ անելու համար ոչ մի ազգու և կըրուկ միջոցներ ձեռք առնուած չեն մինչև ցարդ։ Այն ինչ Ուտիացոց աշխարհի երգրագործ Հայ ժողովուրդը պինդ նստած մնաց իւր հայենի երկրի նահապետական օջաղում անյաջող և աննպաստ պայմանների մէջ, զօրաւոր և անյաղթելի խոչընդոտների ու արգելքների դէմ անզօր և անյաջող կռիւ մղելով... Ուտիացոց երկրի տոկուն Հայ ժողովրդի չարքաշութեան մասին հազարից մի օրինակ առաջ եմ բերում, որպէսզի իմ ազնիւ ընթերցողս մի թեթև գաղափար կարողանայ կազմել նրա անչափ համբերատարութեան և դիմացկունութեան մասին։ Ամառուան կիզող արևի տակ, երբ սաստիկ տօթից և հեղձուցիչ շոգից շունչ քաշելու հնար չէ լինում, հէնց այդ միջոցին ժրաջան Հայ գիւղացին իւր դաշտային աշխատութեան մէջն է։ Այդ երկրի դժբաղդ երկրագործը ոտքից մինչև կոկորդը թրջուած հոտած ու նեխած ջրի ու տղմի մէջ, բրնձի ճահճոտ մարգերում քաշ ու քրտինք մտած՝ մեծ եռանդով քաղհան է անում, այսինքն՝ ճաստակաը և աւելորդ բոյսերն ու փուշերը արմատախիլ է անում, որպէսզի ընտիր և մաքուր բրինձ կարողանայ ստանալ իւր կանաչաղարդ արտերից։ Մի խօսքով՝ Ուտիացոց երկիրը իւր պտղաբեր հողերով, իւր ծաղկաղարդ տափաստաններովն ու գեղանկար հովիտներով, թաւոտ անտառներով, պարզ և վճիտ աղբիւրներով ու վտակներով, յորդահոս ու կատաղի գետերով կատարեալ մի

դրախտ է գրեթէ։ Այսպիսի հարուստ և պատուա-
կան երկրի բնակիչները չնայելով որ չափազանց
աշխատասէր և սակաւապետ են, բայց այսու ա-
մենայնիւ նրանք գտնւում են վերջին ծայր աղ-
քատութեան և թշուառութեան մէջ։ Անտարակոյս,
հետաքրքիր ընթերցողս կհարցնէ ինձնից, թէ
«ի՞նչ է պատճառը, որ Ուտիացոց երկիրը այդչափ
բարեբեր ու առատ երկիր է իւր պէսպէս բեր-
քերով, իսկ երկրագործ ժողովուրդն էլ գիշեր ու
ցերեկ աշխատում է անդադար և հետևում իւր
գործին, բայց և այնպէս նա գտնւում է աղքատ
և խեղճ վիճակի մէջ»։ Նրա աղքատութեան և դըժ-
բաղդութեան գլխաւոր պատճառն այն է, որ Ու-
տիացոց երկրի ժողովուրդը գտնւում է վերջին
ծայր տգիտութեան և թանձր խաւարի մէջ թա-
ղուած։ Պետական օրէնքներն ու կարգերը նա
չգիտէ, լեզու չգիտէ, որոնցից նա կարողանար
օգտուել։ Արդարադատութեան և տիրող օրէնքի
պաշտպանութեան մասին նա շատ մութ գաղա-
փար և ծուռ հասկացողութիւն ունի։ Այս իսկ
պատճառով նրան չարաչար հարստահարում ու
կողոպտում են անիրաւ թուրք բէկերն ու ան-
խիղճ վաշխառուները, պետական գաւառական
ստորին պաշտօնեաներն ու գիւղապետները (իւղ-
բաշիները), գիւղական դատաւորները, անպար-
տաճանաչ և շահամոլ քահանաներն ու նրանց հա-
մախոհները։ Իսկ այս սովորական պատուհասնե-
րից զատ, մնացած չարիքներն էլ լրացնում են
արիւնարբու աւազակներն ու ընութեան արհա-
ւիրքները, որպիսիք են՝ կարկուտն ու կայկածա-

կը, տեղատարափ անձրևներն ու սարսափելի հե-
ղեղները, որոնք աշխատասէր գիւղացու արտերն
ու այգիներն են սրբում-տանում և նրան օրա-
կան մի կտոր չոր հացի կարօտ թողնում։ Այս և
այսպիսի սոսկալի չարիքների դէմ կռուելու ոչ
մի հնար ու միջոց չունի այն դժբախտ ժողո-
վուրդը, որ բացի Նոյ նահապետից մնացած հը-
նադարեան երկրագործական պարապմունքից, ու-
րիշ ոչինչ չգիտէ։ Այսպիսի մի երկրագործ, աշ-
խատասէր, ժրաջան և պատուական ժողովուրդ
այսօր գտնւում է ամենադժբաղդ և անտանելի
վիճակի մէջ հետևեալ պատճառով։ Կառավարու-
թիւնը Կովկասում գլխահարկը վերացնելուց յետոյ
երբ պետական տուրքերը նշանակեց հո-
ղերի վրայ, այն օրից էլ Ուտիացոց երկրի աշ-
խատասէր երկրագործ ժողովրդի արևը խաւարեց։
Ահա թէ ի՞նչպէս։ Կառավարութեան այդ օրէնքի
հրատարակուելուց յետոյ պետական հողաբաժին-
ները դեռ ևս չչափած և գիւղական համայնքնե-
րին չբաժանած, Բումի ճարպիկ թուրք բէկերը
մի խորամանկ խաղ խաղացին միամիտ գիւղա-
ցիների գլխին։ Գիւղացիների տգիտութիւնից և
պարզամտութիւնից օգտուելով, նրանք իրենց
բազմաթիւ ծառաներով ու արբանեակներով մար-
դիկ պատրաստեցին, որոնք սկսեցին գիւղացոց
մոլորեցնել սուտ խոստումներով և ոսկեղէն դա-
տարկ յոյսերով։ Շատերին հաւատացրին, թէ
«այս ինչ, այն ինչ պետական հողաբաժինները
ցոյց տուէք, որ նրանք բէկական են, այն ժամա-
նակ մենք ձեզանից տասանորդական տուրք չենք

առնի, դուք կրօնով զատուած մեր եղբայրներն էք, առատ-առատ կցանէք, կենձէք ձեր հացահատիկները. ձեր սրտից բղխած ջնչին մի մասը մեզ կտաք, իսկ մնացած մեծ մասը դուք լիուլի կը-վայելէք, իբրև ձեր քրտնիքի արդար վաստակ»։ Հարկաւ, խորամանկ բէկերն իրենց չար նպատակին հասնելու համար ոչ մի հնար և միջոց չէին խնայել։ Ժողովրդական առածն ասում է՝ «կաշառքը մութ տեղը լոյս կտայ». ազդեցիկ և հարուստ բէկերի փայլուն ոսկիները մեծ հրաշքներ գործեցին։ Սրանից մի քանի տարի առաջ պետական պաշտօնեաների հսկողութեամբ հողաբաժինները երբոր չափչփում և յատկացնում էին գիւղական համայնքների իւրաքանչիւր ընտանիքին, այն ժամանակ Զոռլու և Միրզաբէկլու գիւղացիներից մի քանի տասնեակ ծխեր բոլորովին զրկուեցին իրենց բարեբեր վարելահողերից. վասնզի կարճամիտ և վատահոգի Հայերից և Թուրքերից ոմանք ցոյց էին տուել, որ այդ պետական հողաբաժինները զուտ բէկական հողեր են։ Ահա այսպիսի խորամանկ միջոցներով, իսկ երբեմն էլ սարսափելի սպառնալիքներով, վերջին 30—40 տարուայ ընթացքում բէկերը հետզհետէ յափշտակեցին պետական ընդարձակ և բերրի հողերը և կատարելապէս տէր դարձան։ Այդ արդաւանդ հողաբաժինների առատ բերքերից առիւծի բաժինը իրենք բէկերն են ստանում, իսկ աշխատասէր և չարքաշ երկրագործ Հայ գիւղացին մնում է սոված, մերկ և խեղճ վիճակի մէջ։ Մի բուռն իսկական երկրագործ ժողովրդի դարաւոր

հողերը խլում-յափշտակում են մի բանի զօրաւոր ու ագահ բէկերը. իսկ ե՛ս այդ դժբաղդ ժողովրդի որդիս հարազատ որդի, իմ սրբազան պարտքս եմ համարում բողոքել այդ անիրաւութիւնների դէմ և իշխանութեան խորին ուշադրութիւնը հրաւիրել կատարուած յանդուգն գործունեների մասին։ Վասն զի դժբաղդ Հայ ժողովուրդը այլևս ապրելու հնար և միջոց չունի, ուրիշ մօտակայ գաւառներում էլ ազատ հող չկայ, ուր նա կարողանար գաղթել և նոր բնակութիւն հաստատել *)։ Ընդհանրապէս Ուտիացոց աշխարհի բոլոր երկրագործ գիւղացիք թաղուած են ծանր պարտքերի տակ, մինչև իրենց կոկորդը, որոնցից ազատուելու ոչ մի հնար չունին։ Որովհետև, ինչպէս ասացի, նրանց դառն աշխատանքների արդիւնքները բէկերն են յափշտակում, նրանց ուղն ու ծուծը անխիղճ վաշխառուներն են ծծում անյագ տզրուկի պէս։ Ընտիր յատկութիւններով օժտուած մի բուռն ընտիր երկրագործ Հայ ժողովրդին թողնել իրենց անողոք ճակատագրին, բոլորովին անխոհեմութիւն ու անխղճութիւն է ամեն մի բանիմաց և զգայուն Հայի կողմից։ Այդ դժբաղդ

*) Բազուաբնակ Հայ կալուածատէր Առաքել-ապէր Ծատուրեանի և Գրիգոր-ապէր Դիլդարեանի հետ մի քանի տարի առաջ երկար ու բարակ գրաւոր բանակցութիւն սկսեցի, որպէսզի հողից զրկուած 45—50 տուն Հայ գիւղացիների բնակութեան համար հողաբաժիններ տան իրենց ընդարձակ ագարակներում որոշ պայմաններով։ Բայց բարեսիրտ երկու Հայերը ևս՝ իրենցից անկախ արգելառիթ պատճառներով իմ յոյսերս ի դերև հանեցին...

երկրագործ Հայ ժողովրդի աղի արցունքները սրբել և գիւթական գաւազանի մի հարուածով անվերջ չարիքները վերացնել ու նրանց բարօրութիւն և երջանկութիւն պարգևել, մեր տկար ոյժերից շատ ու շատ վեր բաներ են։ Ապա ուրեմն երկու չարիքներից փոքրագոյնը պիտի ընտրել։ Այդ դժբաղդ ժողովրդին վերահաս թշուառութեանց մաշող ճիրաններից փրկելու համար ես առաջարկում եմ հետևեալ կորուկ միջոցները։ Նախ՝ բանալ երկդասեան դպրոցներ, երկրագործական և գիւղատնտեսական բաժանմունքներով, որ գիւղացու երեխան կարողանար մի թեթև գաղափար կազմել գիւղատնտեսութեան տարրական գիտելիքների մասին։ Երկրորդ՝ գիւղատնտեսութեան վերաբերեալ, ուժասպառ և նիհարացած հողերը պարարտացնելու, նորագոյն գործիքներով մշակելու եղանակի, եղջիւրաւոր անասունների և պտղատու պէսպէս ծառերի ագնուացման և զարգացման մասին դասախօսութիւններ կարդալ երկրագործ ժողովրդին հասկանալի—Ուտիերէն, Հայերէն և թուրքերէն լեզուներով։ Երրորդ՝ ցոյց տալ նրանց (գիւղացիներին) երկրագործութեան և գիւղատնտեսութեան վերաբերեալ պէսպէս կատարելագործուած գործիքներ և բացատրել նրանց գործածութեան եղանակը։ Չորրորդ՝ կազմել «սպառող» և «արտադրող» ընկերութիւններ *)՝ մեծ և

*) «Մշակի» 1903 թ. 199—200 և 202-րդ համարների բանասիրական բաժնում յարգելի պ. Ե. Թոփչեանը «Օգտակար կազմակերպութիւններ» խորագրի տակ մի շարք

կենդրոնական գիւղերում, որ գիւղացոց բերքերը նա արտահանէր և ձեռնտու պայմաններով վաճառէր նշանաւոր քաղաքների շուկաներում, իսկ իրենց գիւղացոց անհրաժեշտ պէտքերը ինքը հոգար՝ տալով նրանց արժան գնով։ Հինգերորդ՝ հիմնել գիւղերում հասարակական շտեմարաններ և երկրի բոլոր բերքերից որոշ տոկոս յետաձգել այդ ամբարների մէջ։ Ապա անբերրիութեան տեսն վաճառել ամբարուած բերքերը և այդ վա-

շահեկան յօդուածներով մի առ մի ցոյց է տալիս, թէ ինչպէս և ինչպիսի եղանակով կարելի է կազմակերպել «սպառող» և «արտածող» ընկերութիւններ մեր Հայ գիւղերում։ Հաստատ փաստերով նա ապացուցանում է, որ այդպիսի օգտակար ընկերութիւնները մեծ բարեփոխութիւն և անգին յեղաշրջումն առաջ կբերեն մեր գիւղական թմրած և յետ մնացած Հայ ժողովրդի մէջ։ Նա խորհուրդ է տալիս գիւղի հասկացող երիտասարդներին, որ ժողովրդի գլուխ անցնեն և սկսեն գործել։ Բայց տողերիս գրողը գիւղացու զաւակ լինելով, նա շատ լաւ ծանօթ է թէ գիւղացու դաղն վշտերի ու անհուն ցաւերի և թէ ամեն մի օգտակար գործ սկսելիս՝ խոչընդոտ եղող և արգելք հանդիսացող «Ծատուր Բիսմարկների» խափանիչ գոյ ծողութեանց հետ։ Ուստի համարձակւում եմ ասել, որ «Օգտակար կազմակերպութիւններ» սկսել մեր Հայ գիւղերում, տեղական անպատրաստ և անձեռնհաս մարդկանց ձեռքով, կնշանակէ տուն շինել աւազի վրայ։ Իմ համեստ կարծիքով, այդպիսի «Օգտակար կազմակերպութիւններ» ձեռնարկելու համար գործը յաջող և հաստատ հիմքերի վրայ դրուած կլինի միայն այն առեն, երբոր ձեռնարկողները և վերահսկողները կլինին դրսից եկած բանիմաց, բարեխիղճ, բարերարոյ, խելքի, մտքի և տպաւորող լեզուի տէր և բուռն եռանդով գործող մարդիկ։

ճառումից զոյացած զումարով օգնել ամենաաղ-
քատ գիւղացիներին և կամ համայնքի ամենակա-
րևոր ծախքերը հոգալ։ Վեցերորդ՝ Բագուի կամ
Թիֆլիզի մէջ կազմել այնպիսի ակցիոներական-եր-
կրագործական մի ընկերութիւն, որի անդամակ-
ցական վճարը ժառչելի լինէր նոյն իսկ թէ միջակ
քաղաքացուն և թէ գիւղացուն։ Այսպիսով կկաղ-
մուէր մի խոշոր դրամագլուխ և այդ դրամագլխով
կարելի է գիւղական բանկ հիմնել Ուտիացոց աշ-
խարհի բազմամարդ գիւղաքաղաքներից մէկում։
Երկրագործ ժողովրդի տնտեսական վիճակը բա-
րեփոխելու համար կարելի է բանալ երկրագոր-
ծական և գիւղատնտեսական գործերի վերաբե-
րեալ պէսպէս մեքենաների և գործիքների մի
մեծ պահեստ։ Իսկ աղնուացրած կենդանիների ու
պտղատու ծառերի համար հաստատել այնպիսի
կայարաններ, որոնցից Հայ գիւղացիք կարողա-
նային լիուլի օգտուել։ Այսպիսով թէ ակցիոներա-
կան - երկրագործական ընկերութիւնը կշահուի
առատապէս և թէ երկրագործ ու տնտեսապէս
ընկճուած ժողովրդին մեծ բարիքներ արած կը-
լինի։ Եօթերորդ՝ նշանակել Ուտիացոց աշխարհի
համար այնպիսի շրջիկ քարոզիչ մի քահանայ և
կամ վարդապետ, որ խօսելու և քարոզելու շնորհ
ունենար, որ կոշտ ու կոպիտ գիւղացիների վը-
րէժխնդրութեան և առելութեան աւերիչ սերմե-
րը ջնջելու կարողութիւն ունենար, որի մշտական
բնակութեան տեղը լինէր Ճալէթի վանքը և որի
սրբազան պարտքը լինէր ձի նստել և շրջել գիւ-
ղէ գիւղ և անդադար քարոզէր ու համոզէր,

յորդորէր ու խրատէր, որ սիրով և համերաշխու-
թեամբ ապրեն Հայ և Թուրք տարրերը իրար հետ
և երբէք ձեռաս չտան միմեանց. լաւ բացատ-
րէր ու հասկացնէր պարզամիտ գիւղացիներին,
թէ միմեանցից քէն ու վրէժ լուծելու համար
եղջիւրաւոր անասուններին ջլատելը, տնային
կենդանիներին սպանելը, այգիների խաղողի վա-
զերն ու պարտէզների պտղատու ծառերի կտրա-
տելը, հացահատիկների ու խոտի դէզերի և տնե-
րի ու մարաքների այրելը, մահացու յանցանք
և անքաւելի մեղք է ամեն մի մարդու համար։
Շրջիկ քարոզիչ քահանան կամ վարդապետը իւր
ճարտար լեզուով, հասուն խելքով ու հեռատես
մտքով զօրեղապէս կազդէր և կներգործէր գիւղա-
ցիների կոշտացած սրտերի ու խաւար մտքերի
վրայ և ահագին բարեփոխութիւններ կմտցնէր
նրանց մէջ։ Այն ժամանակ պարզամիտ գիւղա-
ցիք սիրով և գրկաբաց կընդունեն այն ամեն օգ-
տակար նորութիւնները, որոնք իրենց կենսատու
և պայծառ լուսով բարեկեցութիւն, տնտեսական
բարօրութիւն և կատարեալ երջանկութիւն կը-
մտցնեն մեր գիւղական մռայլ ու խղճուկ կենցա-
ղավարութեանց մէջ։ Սակայն Ուտիացոց աշխար-
հի դժբաղդ գիւղացիները հնարաւորութիւն և կա-
րողութիւն չունին հրաւիրել և պահել իրենց սե-
փական միջոցներով այնպիսի շրջիկ քարոզիչ քա-
հանայ, որ ոչ միայն քարոզելու և մտքերի վրայ
տպաւորելու ընդունակ լինէր, այլ և տեղական
լեզուների, ազգաբնակութեանց սովորութիւնների
և նրանց նիստ ու կացի հետ քաջ ծանօթ լինէր։

Ուստի Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական յարգելի խորհրդի մեծարգոյ անդամները մեծ բարիք և մարդասիրական մի գեղեցիկ գործ կատարած կլինէին ամբողջ Ուտիացոց աշխարհի երկրագործ դասի ազգաբնակութեանց համար, եթէ որ այդ բարերար գաւառում, պահէին իրենց հարուստ եկեղեցու հաշուով մի շրջիկ քարոզիչ քահ. որ միանգամայն ազատ լինէր ծիսակատարութիւններից և ծուխ հովուելու պարտաւորութիւններից։ Ահա այսպիսով հեռագիտէ բոլորովին կվերանային հարստահարութիւնն ու վաշխառութիւնը և ամեն տեսակ չարիքներ և այն ատեն երկրագործ ժողովուրդը կսկսէր զարգանալ ու առաջ ընթանալ՝ թէ բարոյապէս և թէ մնտեսապէս, հաստատ և հզօր քայլերով։ Ահա, այսպիսով միայն կզարգանար ու կծաղկէր Ուտիացոց երկիրը և իւր առատ ու ազնիւ բերքերով հարստութեան աղբիւր և անսպառելի շտեմարան կըդառնար ոչ միայն Կովկասի, այլ և լայնածաւալ Ռուսիայի ամենահեռաւոր վաճառաշահ քաղաքների շահագործութեան համար։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մայրենի հողից և նշանաւոր կենդրոններից հեռացած ու անջատուած լինելով, գտնուում եմ այնպիսի մի երկրում, ուր Հայ գրականութեամբ պարապողի համար ոչ նպաստաւոր պայմաններ կան և ոչ էլ բարեյաջող հանգամանքներ։ Ուրիշ խօսքով՝ հարուստ և ճոխ գրադարան-մատենադարան չկայ տեղս, գրաւոր աղբիւրներ և յիշատակարաններ չունիմ ես իմ ձեռքիս տակ, որոնցից կարողանայի օգտուել։ Ուստի իմ ազնիւ ընթերցողներս և քննադատներս եթէ պատմական սխալմունքներ և անճշտութիւններ նշմարելու լինին իմ «Թուցիկ ակնարկիս» էջերում, խնդրում եմ, թող ներողամտութեամբ նայեն և ակամայից սպրդած սխալանքներ համարեն։

ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգային գրադարան»
NL0415958